

ՔԱՆԱԲԵՐ

Հոգեւոր Աստուծոյ Աստուծոյ ՀԱՄԱՐ
 PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(Ժ. Տարի) ԼՈՅՆՄԵՐ 1934

(10^{me} Année) Novembre 1934

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Միայն մտւոր մը

Գ. Գ. Խ.

Հոգ. կ'անը

Երկնային կեանքը

Բայց

Շարժական անձնաքննութիւն

Նուիրումս

Թ. Օ. Սփարքս

Թարգ. Չ. Բ. Պուտոքեան

Ա. Օ. Փափազեան

Սամուէլ Բրուտեան

Կենաց ամուսնութիւն

Կրօնէ փորձը

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Կենսագրական

Ճան Ուէսլի

Վ. Ս.

Մանկանց սիւնակ

Աստուծոյ պարգեւը

Յ. Բ.

Ո՛վ աւելի շատ կը սիրէ

Մ. Կ. Պարտմեան

Ջանսգան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամսածերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կրօնական Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնական ճշմարիտ թանձր
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարսնութեամբ ին մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամսածերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտիի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն ռուս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ 3 այլ 2 լին ծարսմանով ալ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրդութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՑ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգևոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վաշխեն Քրիստոսով:



ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կամ իկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԳԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԳԵՐԷՆ** միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արմենի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. ե. 14

Քանզի ալ աւ-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստումներէն որ մեզի մ'նացեր է,
ծեպմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

Ժ. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԻԱՆ 1954

ԹԻԻ 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻԱՅՆ ՄՍՈՒՐ ՄԸ

Իր անդրանիկ Որդին ծնաւ ու խոնձարուքով
փաթթեց եւ զԱնիկա մտուրին մէջ պառկեցուց,
վասնզի իջեալնին մէջ իրենց տեղ չկար:
Ղուկ. Բ. 7

Վերեւ նշանակուած համարը մին է Ս. Գրոց
ամենէն խորհրդաւոր խօսքերէն: Ան կը մատնա-
նշէ մէկ կողմէն Յիսուսի աստուածային խոնար-
հութիւնն ու հեզութիւնը, իսկ միւս կողմէն մար-
դուն բարոյական ու հոգեկան անկումը: Աստուա-
ծորդին՝ մարդոց հանդէպ Իր տաճած անհուն սէ-
րէն մղուած՝ մերկացաւ Իր երկնային փառքը,
հրաժարեցաւ հրեշտակներու ծառայութիւնէն,
սուրբերու ալելուիաներէն ու Աստուծոյ փառա-
ցութենէն և խոնարհեցաւ դէպի վշտալից ու փը-
շալից աշխարհը, բայց մարդիկ Անոր իբր ծնն-
դավայր մ'այն մտուր մը տրամադրեցին: Ոչ Հե-
րովդէսի լուսաշող պալատը, ոչ քահանայապե-
տական զարդարուն ապարանքը և ոչ իսկ աւելի
համեստ բնակարան մը տեղ չյատկացուց Յիսու-
սի: Նորինիս իջեալնին մարդոց տրամադրուած
վայրին մէջ տեղ չգտաւ Անիկա:

Այս դէպքը միեւնոյն ատեն խորհրդաւոր պատ-
կեր մըն է, որ կը ցուցնէ մեզի մարդոց բռնած
դիրքը հանդէպ Յիսուսի՝ Անոր ծնած օրէն մինչև
ներկայ ժամանակա: Միայն մտուր մըն է Անոր
տրուած տեղը: Անոր տեղ չկայ պալատին մէջ,
կանանչ սեղանին շուրջ, վասնզի ամէն դարու
դիւանագէտն ալ՝ նման Խտալացի Մաքիավէլիի՝
կը կարծէ թէ իր ազգային ինքնապաշտպանու-
թեան եւ քաղաքական նպատակներուն համար
անհրաժեշտ են պատերազմ, ազգային հպարտու-
թիւն ու անձնասիրութիւն եւ ստութիւն ու նեն-
գամտութիւն: Ուստի չկրնար հաշտուիլ, կողք
կողքի նստիլ Յիսուսի հետ, որ ճշմարտասիրու-

թիւն, խոնարհութիւն ու անձնասիրութիւն կը քա-
րողէ խօսքով ու կեանքով՝ ըսելով, «Ձեր խօսքն
ըլլայ այոն՝ այո, եւ ոչը՝ ոչ... երանի՜ հեղերուն,
վասնզի անոնք պիտի ժողանգեն երկիրը... երա-
նի՜ խաղաղութիւն ընողներուն, վասնզի անոնք
Աստուծոյ որդիներ պիտի կոչուին»:

Յիսուսի համար տեղ չունի նաեւ առեւտրա-
կանը իր վաճառատան՝ ու գործարանատէրը իր
գործարանին մէջ, քանզի Անիկա Իր Պօղոս ծա-
ռային բերնով անոնց կը հրամայէ, «Մինակ ան-
ձերնուդ շահը մի փնտռէք, հապա ամէն մէկը
իր ընկերոջն ալ»: Մինչդեռ անոնք հարստանալ
կ'ուզեն՝ խաբելով իրենց յաճախորդները եւ յա-
փըշտակելով, ուտելով գործաւորին իրաւունքը:

Իսկ գործաւորը, որ նոր արթնցած է ու գի-
տակցած՝ թէ ինք ալ իրաւունք ունի արեւուն
տակ իր տեղը զբաւելու եւ վայելելու աշխարհը
եւ կը սպասէ այն օրուան, երբ պիտի կարենայ
իր բռնեցքին ուժը ցոյց տալ զինք զրկողին, կըր-
նայ անիկա իր բանուորական կազմակերպու-
թեան մէջ տեղ մը տալ Անոր, Որ կը յորդորէ
չարին հակառակ չկենալ եւ զլխաւոր ուշադրու-
թեան առարկան ընել ոչ թէ երկրաւոր, մարմնա-
ւոր ու անցաւոր՝ հապա երկնաւոր, հոգեւոր ու
յաւիտենական կեանքն ու պարգեւները:

Յիսուսի տեղ չեն ուզեր տալ իրենց քով գիտ-
նականն ու փիլիսոփան ալ, քանզի Անոր հրաշք-
ներն ու յարութիւնը վերիվայր կը շրջեն իրենց
քմբռնումը բնական անյեղլի օրէնքներու մասին:

Պիտի չզարմանա՞ք, երբ ըսենք թէ բարե-
պաշտներու, եկեղեցասէրներու մեծամասնու-
թիւնն ալ տեղ չունի Յիսուսի համար: Ամէն դարու
մէջ մեծ թիւ մը կը կազմեն փարիսեցիները, ո-
րոնք կոթնած իրենց բարի գործերուն ու անձ-

նական աղբարութեանը, կ'արհամարհեն Յիսուսի շնորհքը եւ որոնք զերի դարձած աւանդամոլութեան, եկեղեցական սովորութեանց ու ծէսերու, — կրօնի անկենդան, քարացած ու արտաքին ձեւին՝ կը սպաննեն հոգին եւ կը խաչեն ճշմարտութիւնը, սէրը, նոյնիսկ Քրիստոսը՝ Աստուծոյ պատիւը պաշտպանելու պատրուակով:

Այսպէս, Քրիստոսի համար այսօր ալ տեղ չկայ իշխանին մէջ: Անիկա դուրս ձգուած է մարդկային բոլոր ուշադրաւ վայրերէն եւ հաստատութիւններէն:

Եւ ի՞նչ եղած է այս մերժումին արդիւնքը. — կատարեալ անանկութիւն: Հակառակ բոլոր դիւանագէտներու ջանքին՝ այսօր աշխարհ կը գրտնրէի ամենէն սոսկալի պատերազմի մը մղձաւանջին տակ. հակառակ նպարեղէնի, հագուստեղէնի ու ճարտարարուեստի ամէն կարգի արտադրութեանց ճոխութեան (այնքան ճոխ որ արուեստականօրէն կը փճացուին) մարդկութեան մեծամասնութիւնը կը հեծէ տնտեսական անհեղինակ տաճարային տակ. հակառակ բազմաթիւ գոլէճներու ու համալսարաններու, թերթերու, պարբերականներու ու գրքերու եւ թէքնիքական ու գիտական յառաջդիմութեան, սեւ խաւարը պատած է մարդկային միտքը, որ ի գո՛ւր կը խարխափէ գտնել ճշգրիտ պատասխանները գինքն զբաղեցնող ամենէն էական հարցերուն: Եւ հակառակ բարոյագիտական մեծածաւալ երկերու եւ կրօնական ու ընկերային բազմաթիւ հաստատութեանց՝ ներկայ սերունդը մեծ մասով ընկղմած է անհատատութեան ու անբարոյականութեան տիղմին մէջ: Կարծես մեր օրերուն մէջ ալ վերակենդանացած են յունահռոմէական քաղաքակրթութեան անկման շրջանի մոլորումներն ու մեղքերը, որոնց մասին Պօղոս առաքեալ կը գրէ, «Իրենք զԱստուած ճանչնալով՝ Աստուծոյ պէս չփառաւորեցին կամ շնորհակալ չեղան, հապա իրենց խորհուրդներուն մէջ ունայնացան եւ սիրտերնին անմտութիւնով խաւարեցաւ. իրենք իմաստուն ենք՝ ըսելով յիմարացան... երկրպագութիւն ու պաշտօն մատուցին ստեղծումնէն ինքեանք թէ Ստեղծողին», (ներկայի ըմբռնումով, կենդանի Աստուծոյ տեղը՝ պաշտեցին զըրամը, մարդկային ուժը, իմաստութիւնը եւն): ...«Աստուած ալ զանոնք անարգ խորհուրդներու մատնեց անվայել բաներ ընելու, որոնք լեցուն էին ամէն անիրաւութիւնով, պոռնկութիւնով, անըզգամութիւնով, ազահութիւնով, չարութիւնով, մարդասպանութիւնով... նենգութիւնով»՝ Հովմ. Ա. 48-52:

Կարճ՝ սոսկալի քառսի մը վերածուած են քաղաքական, տնտեսական, մտաւոր եւ բարոյական աշխարհները: Ահա՛ արդիւնքը Քրիստոսը մերժելուն: Ինչպէ՞ս կարելի է ելլել այս քառսէն: — Միայն մէկ ճամբայով... Յիսուսի տալ Իր արժանավայել տեղը: Թող Անիկա գրաւէ կանանչ սեղանին շուրջ ազալին աթոռը, թող շարժի քաղաքականութիւնը Անոր խօսքովը, և իսկոյն պիտի դադրի պատերազմի վախը, իրականացած պիտի ըլլայ հրեշտակներու աւետիսը. «Երկրի վրայ խաղաղութիւն»: Դող գիտնականը ենթարկէ ինքզինք Քրիստոսի Հոգւոյն լոյսին եւ պիտի ըլլայ ոչ թէ կոյր առաջնորդ մը՝ կոյրերը մոլորեցնող, հապա ջահակիր ռահվիրայ մը՝ մարդկութեան ներկայ եւ ապագայ կեանքի ճամբան լուսաւորող: Թող շարժին գործաւորն ու գործարանատէրերը եւ առեւտրականը համաձայն Անոր հրամանին՝ «Քու ընկերդ ո՞րեւ լու անձիդ պէս», եւ պիտի անհետի տնտեսական տաճարապը. քանզի ինչպէս վերեւ ակնարկեցինք, կեանքի անհրաժեշտ պիտոյքները չեն որ կը պակսին, — միայն Ամերիկայի Միացեալ Նահանգները կարող է ոչ թէ միայն 120, հապա 300 միլիոն մարդոց գործ ու կերակուր հայթայթել: Մեր երկնաւոր ձոր ստեղծած երկիրը ուրիշ շատ կողմերու մէջ ալ ունի նիւթական հարստութեան անսպառ զանձեր, որոնք եթէ յայտնաբերուին ու տնտեսութիւն իմաստութեամբ ու սիրով, ամէն մարդ կըրնայ ապրիլ արքայավայել կեանք մը:

Անհրաժեշտ է միայն որ Քրիստոսի տրուի առաջին տեղը կեանքի ամէն մէկ մարդին մէջ: Այդ պարագային անիկա, «Աշխարհի Լոյսը», պիտի փարատէ այժմ ամէն կողմ տիրող խաւարը ու առաջնորդէ մեզ ճշմարիտ խաղաղութեան, բարօրութեան եւ ուրախութեան: Սակայն զըժբաղաբար մարդկութեան գործերը չար են, ուստի աւելի կը նախընտրէ խաւարին մէջ խարխաբել քան թէ Լոյսին գալ, որպէսզի իր չար գործերը չյայտնուին ու չյանդիմանուին (Յովհ. Գ. 19-21):

Եւ այսպէս պիտի տեւէ մինչեւ այն օրը, երբ Յիսուս պիտի գայ, առանց մարդոց կամքին հարցընելու՝ պիտի գրաւէ իր դահլը, պիտի ըլլայ նախապատիւ ամէն բանի մէջ, թաղաւորներուն թագաւորը եւ Տէրերուն Տէրը:

Սակայն մինչ այդ՝ Անոր տեղը պիտի ըլլայ միայն մտուր մը, աշխարհի կողմէն «յիմար, տրկար, ցածազգի, անարգ եւ ոչինչ» նկատուած մարդոց սրտերը (Ա. Կորն. Ա. 26-31): Բայց այս պարագան թող նկուն չընէ հաւատացեալը: Քր-

ըրիտոսի վեհափառութիւնը կը յայտնուի նաեւ այդ ցածագգիներուն միջոցաւ: Ուստի զուն ալ, ով ոչինչ նկատուած քրիստոնեայ, տուր Անոր առաջին տեղը քու գործիդ ու առուտուրիդ մէջ, տկար մարմնոյդ ու մտքիդ եւ պիղծ սրտիդ մէջ, եւ Անիկա զանոնք ամէնն ալ լուսարձակ կեդրոններու պիտի վերածէ ու պիտի փառաւորուի քու անարգ գործիդ եւ անձիդ միջոցաւ: Տեսէ՛ք, ի՞նչ բանի փոխած է Նա Բեթլեհէմի մասուրը:— Աստղ մը, իբր Աստուծոյ աչքը, եկաւ կայնեցաւ անոր վերեւ եւ հոն առաջնորդեց արեւելքի իմաստունները: Եւ այսօր ալ այդ մասուրին վրայ կառուցուած է հոյակապ եկեղեցի մը, ուր ամէն տարի ուխտի կ'երթան հազարաւորներ՝ ամէն ազգէ, դաւանանքէ ու դասակարգէ:

Հրաշք մը չէ՞ այս: Սակայն ասկէ աւելի մեծ հրաշք մը կայ: Տեսէ՛ք, ի՞նչ փառքի հասցուցած է Յիսուս անարգ ու ցածագգի նկատուած ձկնորսները, որոնք իրենց մասուրի նմանող սրտերուն մէջ զինքն ընդունեցին: Նա լուսաւորեց զանոնք երկնային Աստղին՝ Սուրբ Հոգիին լուսով եւ ըրաւ մէկ մէկ լուսատու շահեր, որոնց խօսքը այսօր ալ կը լուսաւորէ մարդոց խաւար ճամբան: Եւ անոնց նման քանի՛ քանի՛ արհամարհուած ձկնորսներ, որոնք իրենց մէջ տեղ մը տուած են Քրիստոսի, ներկայիս ալ կ'ապրին լոյսի մէջ, հակառակ իրենց շուրջը տիրող խաւարին. եւ կը վախճեն արքայորդիներու սեփական ներքին ուրախութիւնն ու խաղաղութիւնը՝ հակառակ դիրենք ալ ճնշող տնտեսական տագնապին կամ հիւանդկախ մարմնոյն:

Գ. Գ. Խ.

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ԵՐԿՆԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՄԻՋ

Աստուածային իւրաքանչիւր ճշմարտութիւն օրէնքով մը կառավարուած է:

Աստուած կը պահպանէ երկնային կեանքի այս օրէնքները: Կը նայի որ յարգուին անոնք, եթէ նոյնիսկ չնշմարուած ալ ըլլան: Փորձառաբար անոնք հոն են միշտ, թէպէտ մենք անոնց գոյութիւնն իսկ անգիտանանք:

Այս պարագան կը բացատրէ թէ ինչո՞ւ Տէրը մեզ անծանօթ ճամբաներէ կ'առաջնորդէ: Նախ կը շփոթինք, բայց ի վերջոյ կը հասկնանք:

Երբ ընդունինք ճշմարտութիւն մը առանց զայն կառավարելու օրէնքը մեր կեանքին մէջ ներգործելու, անհաւասար վիճակ մը պիտի հետեւի մեր վկայութեան պաշտօնին մէջ՝ ներդաշնակութեան պակաս մը: Սխալ դրութեան մը մէջ կ'ենթարկուինք, և այս ճշմարտութիւնը մեզի ի նպաստ գործելու տեղ, մեզի հակառակ գործելու դերին մէջ կը գտնուի: Կը թուի թէ մեր կեանքին մէջ բազմեցուցած ենք զայն, մինչդեռ լոկ մեր գլխուն մէջ տեղաւորած ենք: Ունինք մտային հասկցողութիւն մը, սակայն կ'անգիտանանք զայն իր փրկարար գործութիւնովը:

Ասկէ կը ծագի անհաւասարակշռութիւն:

Վերջ ի վերջոյ աս երկու բաներէն մէկը պիտի հետեւի, կամ ճշմարտութիւնը մեզ բոլորովին պիտի ջախջախէ եւ մեր փորձառութեանը մէջ ճամբայ մը պիտի հարթէ, կամ թէ մենք զայն մէկ կողմ պիտի նետենք ըսելով,

— Այս ճշմարտութիւնը անիմաստ բան մըն է:

Կարելի է ունենալ ճշմարտութեան մէկ խորունկ փորձառութիւնը առանց սակայն ունենալու զայն ղեկավարող օրէնքներուն լման հասկացողութիւնը: Հոգիի մաքրութիւնը եւ սրտի ուղղութիւնը երբեմն Աստուծոյ համար բաւական մը պատճառներ են որ մեզ երկնային բաներու փորձառութեանը մէջ առաջնորդէ: Բայց այս չի նշանակեր որ հոգ կանգ առնելու ենք: Որովհետեւ եթէ հոգ մնալու ըլլայինք, պիտի պատրաստուէինք փորձառութիւն մը քարոզել, փոխանակ Աստուծոյ խօսքը քարոզելու: Աստուած կ'ուզէ որ ճշմարտութիւնը ներհուն կերպով ըմբռնենք: Այս է զոր առաքեալը կը հասկնայ Ա. Պետ. Գ. 15ի մէջ: Ինչ որ կ'ըսուի, կը յանգի սա եզրակացութեան.—

Ճշմարտ Լոյսը Ան էր որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Ինք աշխարհի մէջ էր, եւ աշխարհ Անով եղաւ, ու աշխարհ զԱնիկա չճանչցաւ: Իրեններուն եկաւ, եւ իրենները զինք չընդունեցին: Բայց որոնք որ զինք ընդունեցին անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան Իր անուանը:

Յովհ. Ա. 9-12



— Պատրաստ եղէք ձեր փորձառութիւնը բանացիօրէն բացատրելու:

Նոր կտակարանի մէջ վարդապետութիւնը միշտ պատմութենէն յետոյ կուգայ: Գործք Առաքելոցը լոկ պատահած բաներու նկարագրութիւնն է: Թուղթերը վերջին անգամով գրուեցան պատմութիւնը բացատրելու համար:

Աստուծոյ կամքն է որ մենք յատկ իմացողութիւնը ունենանք այն ճշմարտութեանը, որուն մէջ մտած ենք: Եթէ մեր մէջ անկեղծ փափաք մը կայ Աստուծոյ հետ յառաջ երթալու, Ան մեզի պիտի շնորհ ստի՛նչ որ չենք հասկնար:

∴

Արդ քանի մը խօսք ալ այն կենսական ճշմարտութեան մասին, զոր հոգեւոր տեսութիւն կը կոչենք:

Յուդա կը պատկերացնէ կաղամկերպուած կըրօնքը, կրօնական աշխարհը, որուն տեսնելու եղանակը Աստուծոյ խորհուրդէն բխողովն օտար է: Կրօնական աշխարհի վիճակը Յովհ. Թ. 4-րդ համարին մէջ արդար եւ չափաւոր կերպով ներկայագրուած է: Անոր յաւակնութիւնն է Աստուծոյ բաներուն մէջ լոյս տեսնալ: Այս պարագայով ի ծնէ կոյրը լաւ կերպով կը ներկայացնէ հրեաներու հոգեւոր վիճակը:

Հոգեւորապէս, լոյսը մեր ունեցած ճշմարտութեան քանակութենէն կախեալ չէ: Ճշմարտութեան պարզ ներկայութիւնը բաւական չէ մեզ լուսաւորելու: Մեր ունեցած կամ կարծեցեալ լոյսին լրացուցիչ արժէքը հետեւեալ հարցումն է, արդեօք այդ լոյսը ազատագրած է մեզ: Մեր հոգեւոր տեսութիւնը փրկած է մեզ այլոց հրապատակութենէն, մեր մարդոցմէ կախում ունենալէն:

Երկար տարիներ ի ծնէ կոյրը յարատեւ գինքը շրջապատողներէն կախեալ ապրեցաւ: Քալելու համար այլոց աչքերէն կախեալ էր: Ուտելու համար՝ կախեալ էր անոնց դրամին: Անոր աչքերը բանալով, Յիսուս ազատագրեց զայն այս երկու ծառայութենէն: Այլեւս ան մուրալու կարօտութիւնը պիտի չունենար: Ուրիշներէն առաջնորդուելու փէտքը պիտի չունենար: Իր աչքերը բաց են, կը տեսնէ, ազատ է:

Այլեւս խիստ նշանակելի է տեսնել այս մարդը, իրար յաջորդ կարեւոր հանգրուաններով, Յիսուս Քրիստոսը իր բացարձակ Տէրը դառնելու յառաջդիմութեանը մէջ:

Երկու բաները միշտ զուգընթաց են հոն,

ուր մարդկային ազդեցութիւնները մրցում կ'ընեն Յիսուսի պատկանող մասնաշատուկ իշխանութեան դէմ: Հոն լոյս տեսնելու յաւակնութիւն կայ բայց չկայ ճշմարիտ հոգեւոր տեսութիւն, եւ չկայ ազատութիւն:

Կեանք, լոյս, սէր, Ահա հակիրճ կերպով Յովհաննէսի ամբողջ Աւետարանը:

Այս երեք տարրերը մեր կեանքին մէջ չեն կրնար մնալ, բայց միայն զանոնք ներկայացնող Անձին ներգործութիւնովը: Երեքը իրարու մէջ, եւ պայմանաւ որ անոնք անբաժանելի եւ անբաժան կենան: Այս է Յիսուսի վկայութիւնը: Երկնային կեանքը կրնայ կիրարկուել հոն՝ միայն ուր այս երեք տարրերու միութիւնը յարգուած է:

Երբեմն մարդիկ կ'երեւակայեն թէ կեանքի ամէն երեւոյթ Յիսուսի վկայութեան մէջ ձեն է: Ներուժ գործունէութիւն մը, շահագրգռուած ու եռանդոն անձնութիւն մը իրենց աչքին բացայայտ պատճառ մըն է Աստուծոյ օրհնութեանն ու ներկայութեանը: Սակայն ոչ: Ոգեւորուած ընթացք մը եւ եռանդուն խանդավառութիւն մը ճշմարիտ վկայութեան մը արտայայտութիւններ չեն անպատճառ, որովհետեւ ստէպ լոյսն է որ կը պակսի իրենց եւ իրենց եռանդը տարբեր պիտի ըլլար եթէ լուսաւորուած ըլլային:

Ուրիշներ կը խորհին ու կ'ըսեն,

— Բաւ է որ ճշմարտութիւնը քարոզուի մեզի, այս է մեզի պէտք եղածը, մենք լոյսը ունինք, բաւական է մեզ ասիկա:

Արդ, շատ հաւանական է որ լոյսը ընդունուի եւ ճշմարտութիւնը քարոզուի առանց սակայն նոյն ատեն կեանքն ունենալու: Ի՛նչ խեղճուկ օրհնութիւն... մտնել պաշտաման վայր մը եւ գտնել ճշմարտութիւնը, առանց գտնելու կեանքը:

Նմանապէս կրնանք ունենալ լոյսը առանց սէրը ունենալու: Ուրիշ Աստուծոյ զաւակներ ձեր սիրոյն կարօտը ունին: Եթէ անոնք չպահանջեն, դուք կը բաւականանա՞ք ատով:

Յիսուսի վկայութիւնը կեանքն է, լոյսն ու սէրը միասին արտայայտուած, ներկայացնելու համար Անձ մը, Տէր Յիսուսի անձը:

Թ. Ա. ՍՓԱՐԲՍ

ԲԱՅՑ

IV ԱՍՏՈՒԾՈՅ ԼԱԽԱԳՈՅՆԸ

«Կատարելութեան» խորհուրդը մը նկատելով աշխարհի արդի վիճակը, անկարելի է զուլս հանել: Ամէն մարդ սապէս կը խօսի. ի՞նչ օգուտ է թէ ես առանձին զգուշանամ շրթներս խօսքերէ պահելով: Աշխարհ հիմա քիչ մը աւելի լաւ է քան որ էր Քրիստոսի երկիր եկած պահուն եւ սակայն նա համարձակեցաւ Իր դրօշը բարոյական բարձրագոյն մակարդակի վրայ դնել և յորդորեց Իր հետեւորդներուն որ իրենց մրցակէտ ընտրեն ինչ որ շատերու համար անկարելիութիւն կը սեպուէր:

Ոմանք կը կարծեն թէ պարտինք մենք մեզի տկարութիւններ մը արտօնել, քանի որ լսկ մարդկային ենք: Ոչ մէկը որ Աստուծոյ լաւագոյնը իրեն իտեալ ընտրած է, կրնայ ինքն իրեն թոյլտուութիւն ընել, զի այդ կործանման ճամբան է: Իսկ եթէ թուլատու գտնուէինք մեր քննադատած անձերուն նկատմամբ, մեր դիտողութիւնները աւելի սիրալիր պիտի ըլլային և հիմակուայ գործածած խօսքի արտայայտութեանց մեծ մասը բնաւ չպիտի գործածէինք:

Միայն ծուլութիւնն ու անտարբերութիւնն է որ կրնայ զմեզ արգելել Աստուծոյ առաջագրած լաւագոյնը մեզի համար ընտրել է: Միայն մէկ լաւագոյն կայ, Աստուծոյ որոշած ճամբան և մինչ իրեն հետ մէկտեղ կը քալենք, պիտի կարենանք Իր կամքին դժած ճամբայէն ընթանալ: Նաեւ մէկ լաւագոյն կամք մը, նոյնիսկ երբ նա մեզի առաջնորդէ (ինչպէս նախ քան զմեզ մեր Տէրոջ առաջնորդեց) Գեթսեմանի կամ ի Գողգոթայ, Բայց չվախնա՞նք, ինչու որ Անոր կամքը մեր առաջնորդը պիտի ըլլայ նոյնիսկ մահուան վրայ:

Անկարելի թուելուն համար արդեօ՞ք պարտինք ետ երթալ ստորին բաներով գոհանալու: Միթէ մեր Տէր Յիսուս Քրիստոսը մեզի համար մեռաւ որպէսզի ստորին գայթակղութեանց մշուշին մէջ ուրիշներու կեանքին փոշոտ մանրամասնութեանց միջեւ գետնաքարշ սողոսկելով ապրինք: Յաւէտ նա զմեզ չ՛կանչեր երկնաւոր տեղերու մէջ եղած կեանքին, ուր Իր սիրոյն արեւը պիտի փարատէ այդ ամպերը եւ ուր մեր գլխաւոր մտազբաղումը մարդոց հոգիներու զբաղական եւ յաւիտեանական խնդիրներն են: Եւ անտարակոյս կ'արժէ, ինչու որ աս կը նշանակէ թէ մեր ընկերներուն ու մեր կեանքերը աւելի արգասաւոր պիտի ըլլան, պիտի նուազին թիւրիմացութիւններն եւ ուրիշին առջեւ անբնական

դիրք մը բռնելները, աւելի պիտի ճաշակենք անկեղծ ընկերակցութեան մը վայելքը որ Աստուածային Բարեկամին փառքն է եւ որ նաեւ Անոր հետեւորդներուն փառքը ըլլալու է:

Ապա ամէն բանէ վեր բոլորովին վայել է մեզ «Իր նմանութիւնն» ունենալ իբր մրցակէտ, վասնզի այսպէս նա Իր հոգւոյն աշխատութիւնը պիտի տեսնէ մեր մէջ: Ան կը պահանջէ որ մեր առջեւ ունեցած նպատակակէտը ամենաբարձրն ու լաւագոյնը ըլլայ: «Որ Իր առջեւ կեցած ուրախութեանը համար, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց ու Աստուծոյ ակթողին աջ կողմը նստաւ»: Ուստի Պօղոս սրբազանն առաքեալին հետ միասին ետեւի եղածները մոռնանք ու առջեւի եղածներուն դիմենք, նպատակը դիտելով Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին վազենք:

V ԴԱՇՏԱՅԻՆ ԿՈՉՈՒՆՔԻ ԶՆՄԱՆԻՐ՝

Բայց կեանքը գործնական է, եւ երբեմն պարագաներ կուզան երբ դիւրին չէ իրագործել մեր իտէալը՝ երբ Պօղոսի այս խօսքերը կեանքի պայքարներու իրականութենէն շատ հեռու կը թուին ըլլալ: Սակայն Պօղոս այս տողերը գրած պահուն կը գիտակցէր այդպիսի դժուարութեանց և խոչեւոր, գորոնք մեզմէ քիչերուն տրուած է գիտնալ: Աստուծոյ դարձմաններն ու Քրիստոսի հրամանները բնաւ անգործնական չեն, մեր ներքին հայեցողութեան բնութիւնն է որ չի տեսներ զանոնք կիրարկելու կերպը եւ կը թել անայ հաւատքի մէջ:

Մեր Աստուծոյն ուրախութիւնը անկարելիին յաղթելուն մէջ է: Նա կարող է էն անպատրաստ պարագաներով շրջապատեալ անուղղալ խառնուածքներն իսկ փոխել Իր քաղցրութեան ծագկաստանին՝ ուր քննադատութեան անպէտ խոտերը չեն կրնար աճիլ: Եւ հոգիին պարտէզը բռնաւ Տէրոջը սիրած տեղը չպիտի ըլլայ երգելով, «Ո՛հ, այս տեղն ի՞նչ օրհնեալ է» ու նստելով անցեալ մտայնութեան շուքին մէջ:

Ուստի ի միտ ունենանք թէ դժուարութիւնները պիտի գան: Բայց կեանքի մէջ շահելու արժանի ոչ մէկ բան առանց պայքարի ձեռք կը բերուի, ուրեմն, ինչպէ՞ս Աստուծոյ բարձրագոյն մրցանակը կրնայ շահուիլ անոնցմէ որք կը նախընտրեն առանց պահանջներու հանգստաւէտ կեանք մը:

Պատերազմի մէջ, մեր Մեծ առաջնորդին ձայնն է որ կը հրաւիրէ մեզ մէկզի ձգելու ամէն ծանրութիւն եւ մեզ դիւրաւ պաշարող մեղքը:

մէկդէի թողելու մեր հպարտութիւնը եւ սթափելու լոկ «լաւ»ով գոհացող այն մահացու գոհունակութենէն, մինչ անդին կը ցոլայ Աստուծոյ լաւագոյնին վարձատրութիւնը: Բարձրագոյնին կոչը լսողաց համար, կեանքը երբեք զբօսանաց ճամբորդութիւն մը չէ, բայց մարտի հրճուանքը պիտի գլէ անցնի արտակարգ նշանակէտի մը երեւութային հաճոյքները:

Ուստի ուրիշներու սխալներու վրայով խօսելու փորձութիւնը, իբր թշնամոյն մէկ յարձակումը նկատենք, հսկենք, որ չըլլայ թէ մեր հոգիները կեղծ ապահովութեան մը վստահութիւնովն օրօրուն, մինչ ներքին թշնամին օրն ի բուն կը ջանայ տկարացնել մեր զօրութիւնը:

Իսկ ինչպէ՞ս ընենք խորհուրդի եւ շրթներու գործնական դաստիարակութիւնը: Եթէ որոշենք որ ուրիշներու սխալներու վրայ խօսելու սովորութիւնը պէտք է արժատախիլ ըլլայ Աստուծոյ շնորհքովը, կանոն դնենք սխալմամբ այս յանցանքին մէջ ինկած ատեննիս բերանացի կամ գրաւոր խոստովանիլ: Ասիկա մեծապէս պիտի օգնէ մեզի: Թերեւս ումանք խորհին որ պէտք եղածէն աւելի կը պահանջուի, բայց եթէ համոզուած ենք թէ մեղք մ'է, ինչո՞ւ վարանինք ըսելով թէ ազատութեան ճանապարհը դիւրին չէ:

Կ'ը յիշեմ որ գոլէճական օրերուս իմ պատկանած գնդախաղի բաժնին առաջնորդին գործունէութիւնը չափէ դուրս կը նեղացնէր զիս եւ սովոր էի այս մասին ուրիշներու յայտնել իմ գաղափարս: Օր մը Աստուծոյ Հոգին որոշ կերպով ցուցուց թէ եթէ Քրիստոսի անունը իմ վրաս կանչուած էր, պէտք չէի շարունակել այս դիւրքին մէջ. թէ պարտ էի ներում խնդրել գնդախաղի առաջնորդէն: Միշտ պիտի յիշեմ այն սարսափելի ըսպէները զորս անցուցի իրմէ ներում խնդրելէ առաջ: Այդ պարագան ինծի դաս մը սորվեցուց որ դիւրաւ չպիտի մոռնամ թէպէտ փորձառութիւնը միշտ ներկայ է: Թերեւս այդպիսի դասով մը Աստուած ուրիշներու ալ պիտի սորվեցնէ թէ որքան կ'ատէ այդ բանը:

Եւ կեանքը անհունօրէն աւելի երջանիկ է հոն հակառակ շատ մը դժուարութեանց, շատերուն ցանկալի եղող հոգեւոր ազատութեան պատճառաւ: Ուստի մեզմէ անոնք որ Աստուծոյ բարձրագոյն իտեալին կը տենչան, բարձրագոյն իտեալին յառինք, ինքզինքնիս անվերապահօրէն Աստուծոյ յանձնելով, որ կը հրճուի իրապէս դժուարն ու անկարելին իրականացնելով մեր մէջ: Իրապէս շեղում մը պատահելու պարագային ամբողջ համայնքը կը տրտմի, մինչեւ որ ամէն ինչ

նորէն շտկուի: Կ'ուզեմ միայն աւելցնել թէ մէկէ աւելի համայնքներ կը ճանչնամ ուր այս սկզբունքը սիրով եւ ուրախութեամբ ի գործ կը դրուի:

VI ԻՐԱԿԱՆ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆԸ

«Քննադատութիւն» բառը երբեք ուրիշին արժէքը նուազցնել ըսել չէ, թէպէտ շատերէն այնպէս կը հասկցուի: Մ. Արնօլտի վրայով ըսուած է, «Մարդոց միջեւ աւելի պատկառանք, պարզութիւն եւ սէր երեւան պիտի գար եթէ բոլոր մարդիկ ուղէին իրեն պէս քննադատել», այսինքն, անշահախնդրօրէն ջանալ սորվելու ու տարածելու աշխարհի մէջ գիտցուած ու խորհուած յաւագոյն բաները: Եւ ըսել չէ թէ այս միայն գեղարուեստի կը վերաբերի, այլ նաեւ մարդկային բնութեան ուսումնասիրութեան, որովհետեւ բոլորս ալ գիտակցօրէն կ'ուսումնասիրենք մեր ընկերները: Ճշմարիտ քննադատութիւնը պիտի քաղցրացնէ ու ճոխացնէ մեր կեանքը: Ան պիտի գտէ մեր կեանքը մինչեւ որ Պօղոսի պիտանի խորհրդոց ցանկը իբրեւ մեր ծրագիրը ընտրենք: «Ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքինութիւն եւ ինչ գովութիւն որ կայ այն բաները խորհեցէք» (Փիլ. Դ. 8, 9):

Միթէ մեր «քննադատութիւն» կոչածին մեծ մասը լոկ արտաքին երեւոյթներու եւ խնդրոյ առարկայ անձին պարագաներուն մէկ մակերեսային ծանօթութեան վրայ հիմնուած չէ: Յաճախ մենք չենք գիտեր թէ պայքարի ինչ երկար ժամեր անցան պարտութենէն առաջ: Կ'անգիտանանք այն տազնապեցուցիչ բայց քաջարի մաքառումին, զոր մղուած է մեզի անծանօթ փորձութեանց դէմ ու միայն երեւոյթէն դատելով կը դատապարտենք զմեզ չլսող բացակայ քրիստոնեան: «Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ... եւ կը քննէ սրտին խորհուրդները ու մրտաժուժները» (Եբր. Դ. 12): Ահա իրական քննադատութեան գաղտնիքը: Աստուած դիմաւորութեամբ է որ կը դատէ զի նա սրտին կը նայի, մինչդեռ շատ քիչեր միայն արտաքին երեւոյթէն անդին կը տեսնեն: «Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ զանիկա եւ քու դուռն կ'ընդունի քեզ, եթէ քեզի մտիկ ընէ շահեցար քու եղբայրդ» (Մատթ. ԺԶ. 15): Որքան քիչեր յանցաւորաց հետ այս կերպով կը վարուին, բայց Քրիստոսի հրամանը այս է: «Յանցանքը ծածկողը բարեկամութիւն կը փնտռէ, բայց զանիկա

պատմողը մտերիմ բարեկամները կը գատէ» (Ա. ոսկ. ԺԷ. 9):

Ուստի հաստատ համոզմանց կեանք մը ապրինք առանց էականէն բան մը գոհելու, բայց նաեւ միշտ գուրգուրոտ ըլլանք ուրիշները դատաւարտած ատեննիս, յիշելով Անոր խօսքը, «Ես ալ չեմ դատաւարտեր քեզ, զնա ու ասկէ ետեւ մեղք մի գործեր» (Յովհ. Ը, 11):

Այո, իրական քննադատական հայեցողութիւնը լոկ սխալներ գտնելու կարողութեան մէջ չի կայանար, այլ յաւէտ հաւասարապէս բարին ու չարը զանազանելուն մէջ՝ իբր հետեւանք ունենալով վշտակրութիւն մեղքին վրայ եւ ուրախութիւն բարին ուրիշներուն հետ բաժնելով:

Եթէ իւրաքանչիւր ընթերցող որոշեր որ Աստուծոյ շնորհքով պարտի վերցնել ուրիշին ետեւէն խօսելու այս սովորութիւնը, մեզմէ շատերուն համար կեանքը որչափ աւելի երջանիկ պիտի ըլլար եւ բաց աստի ինչ մեծ ուրախութիւն պիտի պատճառէր Տէրոջը:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ(1)

(ՍԵՐՏԷ, ԱՂԹԷ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԷ)

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ, ԴԱՐՁ

Սաղ. ԾԱ. 1-10, 17: Եսայ. Ա. 16: Եզեկ. ԺԸ. 20, 30-32: Դան. Թ. 5: Յովել Բ. 12, 13: Յոբ. ԽԲ. 6: Մատթ. Գ. 6-8: Գործ. Բ. 36-37: Ղուկ. ԺԷ. 13-14: Կող. Գ. 9: Ղուկ. ԺԵ. 17-19: Գործ. ԺԶ. 30:

Դուն ապաշխարած ես:

Բ. ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ

Յովհ. Գ. 3: Գաղ. 2. 13: Բ. Կոր. Ե. 17: Յովհ.

Ա. 12, 13: Ա. Պետ. Ա. 23: Կող. Գ. 10: Տիտ. Գ. 4 5: Յակ. Ա. 18: Ա. Յովհ. Ե. 1, 4, 18:

Դուն վերստին ծնած ես:

Գ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Սաղ. ԼԲ. 5: Ա. Յովհ. Ա. 9: Յակ. Ե. 16: Առ. ԻԸ. 13: Ովս. Ե. 15: Յես. Է. 19: Երեմ. Գ. 25: Ղատ. ԻԶ. 40-42: Ղուկ. ԺԵ. 21: Նէեմ. Թ. 26: Գործ. ԺԹ. 18, 19:

Դուն մեղքդ եւ յանցանքդ իր տեղը խոստովանած ես:

Դ. ՀԱՏՈՒՑՈՒՄ

Թուոց Ե. 6, 7: Ղեւտ. 2. 1-6: Բ. Թադ. ԺԲ. 6: Ղուկ. ԺԹ. 8: Ելից ԻԲ. 1: Ա. Թադ. ԺԲ. 3: Եզեկ. ԼԳ. 14-16:

Հատուցում ըրած ես:

Ե. ՓՐԿՈՒԹԵԱՆ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Գործ. ԺԶ. 31: Եփես. Ա. 7: Եսայ. ԽԳ. 1: Յովհ. Գ. 14-16: 2. 52: Տիտ. Բ. 14: Յովհ. Ի. 31: Ա. Յովհ. Ե. 13: Կող. Ա. 14: Եբր. Թ. 12: Հռով. Գ. 24: Ժ. 9, 10:

Դուն փրկութեանդ վստահ եմ:

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօնտ Օպէնաս

ՆՈՒԻՐՈՒՄՍ

Յիսուս, իմ լոյսս ու յոյսս բոլոր,
Քեզ նուիրեմ իմ սիրտս մոլոր.
Ո՛հ, զայն սրբէ, եւ յաւիտեան
Բաժին ըրէ երանութեան:

••

Յիսուս, անունդ ինչ սիրելի,
Դո՛ւն ես Փարոսն Գողգոթայի.
Որ լոյս սփռես խաւարին մէջ,
Մեղապարտին նոր կեանք անշէջ:
Դո՛ւն Փրկիչն ես մահապարտին,
Անոր մահը մահովդ անգին
Վերցուցած ես, խաչիդ վրայ,
Ու տուած ես նոր կեանք անմահ:
Ո՛հ, այդ սիրոյդ փողահարն ես,
Կը թօթուրիմ չար աշխարհէս,
Ու կ'աւետեմ ամենուրէք,
Փրկութիւնը մարդկութեան հէք:

ՍՍՄՈՒԷԼ ԲՐՈՒՏԵԱՆ

Հա Սիօթա

(1) Սոյն վերնագրով Հոգեւոր կեանքի սիւնակին տակ ամէն շաբթուան համար մէյմէկ նիւթ պիտի տրուի խորհրդածութեան եւ անձնաքննութեան համար: Կը յուսանք թէ ընթերցողներ ներքնապէս պիտի օգտուին սոյն նիւթերով ուրիշ յառաջիկա տարին ալ ամէն ամիս պիտի հրատարակուին: Եթէ այս խորհրդածութեանց առթիւ հարցումներ արթննալու ըլլան ոմանց մտքին մէջ, թող հաճին զանոնք ղրկել խմբագրութեանս, եւ մենք կը խոստանանք անոնց պատասխանել «Բանբեր»ի էջերուն միջոցաւ:

ԽԱԲ.

ԿԵՆԱՅ ԱՄՈՒՆԵՐԷՆ

ԿՐԱԿԷ ՓՈՐՁԸ

(Միսիոնար ՏՕԲ. Լիւրիկի Եօթագրութիւնէն)

Մեծ բազմութիւն ընդարձակ մէկ անկիւնը քանի մը քառակուսի մէթր տարածութեան վրայ շարուեցան այն փայտերէն, զոր մարդիկ Սինկափուրի մէջ խոհանոցի փայտ կը կոչեն եւ որ վառելու ժամանակ զրեթէ բնաւ մոխր չեն տար եւ միայն ճերմակ մոխիր մը կը թողուն իրենց ետեւը:

Քահանան եկաւ եւ երկու թիթեղ քարիւղ թափեց անոնց վրայ եւ անմիջապէս վառել տուաւ որպէսզի կրակը կարելի եղածին չափ շուտով պատրաստ ըլլայ:

Բալինին մօտ անկիւն մը զետեղուած էր երաժշտական բեմը, որուն վրայ խալտոս ձայներով սրինգներն ու տաւիղները զուարթ խաղերով օղը կը թնդացնէին: Հետզհետէ եղանակը քայլերդի մը երեւոյթն առաւ եւ քիչ յետոյ մեր աչքերը դարձան խիստ լուրջ եւ համբուող քայլերով տաճարին դռնէն դուրս յառաջացող երեսունէն քառասուն այրերուն եւ կիներուն վրայ, որոնք ուրիշներէ կը տարբերէին իրենց հագած կարմիր շրջանակով մը եզերուած բոլորովին ճերմակ հանդերձներով:

Թափ բը երաժշտական կանոնաւոր ժամանակաչափերով կը մօտենար կրակին եւ ժողովուրդը միշտ աւելի երկիւղած տեղ կը բանար անոնց: Այլեւս կրնայի նշմարել անոնց զէմքերը որոնց վրայ կը փայլէին արդէն խոռոչացած ակնակապիծներուն մէջէն յառող երկու դնդակները որոնք բակը շրջապատող բարձր պատերուն վրայէն աւելի անդին կը զիտէին, դէպի հոն ուր հասարակ մարդկային աչքերը այլեւս չէին կրնար գօրել: Այս խորհուրդը հաստատուեցաւ մտքիս մէջ երբ լսեցի թէ այս ապաշխարողները խիստ նախապատրաստական փորձերէ անցած էին երկարատե օրերու ընթացքին ծամալահութեամբ եւ ինքնամփոփմամբ: Խղճալի, միեւնոյն ժամանակ հարկու ազդեցութիւն մը կ'ընեն անոնք իմ վրայ, մանաւանդ երբ կը տեսնէի անոնց մէջ անձէ, հասակէ ու տարիքէ ուխտաւոր ապաշխարողներ:

Թափօրին մէջ յաչքիս հանդիպեցաւ յանկարծ ծաղկահասակ աղջիկ մը տասներեքեղ կամ տասներկեց տարեկան, թերեւս լաւ էր ըսել կին մը, քանզի իր շղարշին տակէն նշմարելի էր մանկան

մը սեռիկ գանգուրով կ'որիկ գլուխը, որուն մարմինը կը հանգչէր իր աջ թեւին վրայ: Փափուկ առողջութեան տէր, այդ կնոջ վրայ մասնաւորապէս կը տեսնուէին հետքերը այն խիստ կրօնական ծիսակատարութեանց սրոնցմէ նա ապաշխարութեան օրերուն մէջ անցած էր, որուն պատճառաւ թերեւս նաեւ իր ընկերուհիներուն մէջ ամենէն տկարը կը տեսնուէր: Սիրտս սկսաւ բաբախել անզգալարաբար եւ սահմոկիչ սեւ պատկեր մը պարարեց միտքս այն խորհուրդով թէ ի՞նչ պէս այս խեղճուկ տկարակազմ արարածը այդ հարկու կրակէ փորձին պիտի դիմանար: Այժմ ապաշխարողներու առաջին գոյգը արդէն մօտեցած էր կրակին եւ առանց պզտիկ ձայնի մը կամ ցաւի նշանի մը, նոյնիսկ առանց քայլերը մի քիչ յապաղեցնելու, երկու ձախ ոտքերը դրուեցան կրակին մէջ թաղուած մինչեւ ստորին սըրունքները, որոնցմէ խանձող զեղնօրակ մոխր մը բարձրանալով օղը մարդկային մսի ալրուած հոտով լեցուց: Անդրդուելիօրէն աջ ոտքը անոր հետեւեցաւ եւ նոյն համբունթաց քայլերով առաջին գոյգը շարունակեց կրակին մէջէն երկրորդը եւ երրորդ գոյգերը անոնց ետեւէն եւ միւսներն ալ շարունակաբար հետեւելով անոնց կրակէն անցան ու շարունակեցին իրենց քայլերը սուր աւազներուն վրայէն դէպի տաճար: Այս պարագային իմ ուղեղս կը տազնայի սա հարցով թէ ո՞րն է աւելի դժուարը, առողջ ոտքերով կրակին մէջէն քալելը թէ այրուած ոտքերով աւազին վրայէն երթալը:

Վերջապէս կարգը մանկամարդ կնոջ եկաւ. անոր դէմքն ալ միւսներուն նման դէպի վեր բարձրացած ուղղահայեաց դէպի յաւիտենականը ու հաղիւ թէ առաջին քայլը կը դնէր նա կրակին մէջ, անոր թեւերը քակուեցան զսպանակէ մը շարժուածի նման եւ նա գետինը դարձաւ կոնակին վրայ բոլորովին ուժաթափ: Երկու ոտականներ որոնք պաշտպանութեան համար կեցած էին հոն, օգնութեան փութացին բռնելու զայն եւ քովը զսնուող անձերու խնամքին յանձնելու, բայց անոր դիրկի գաւազը արդէն ինկած էր կրակին մէջ եւ խանձուած ու շնչահեղձ: Ընդհանուր խառնակութիւն մը եւ խիստ քննադատութիւններ եղան խեղճ ապաշխարող կնոջ վրայ: Իսկ ես արդէն տեսած ըլլալով այդպիսի ահարկու եւ ջիղերու խարազանող տեսարաններ, այլեւս չկրնալով դիմանալ, ձեռքը բռնեցի զիս հոս բերող աշակերտին եւ խնդրեցի անկէ որ հեռանանք:

Ի՞նչ բան կը զրդէր այս խեղճ մարդիկը այս

խեղճ մարդիկը այս անտանելի տառապանքներուն դիմադրել: Մեղքէ ազատելու պահանջը: Ես փրկութեան ծարաւի եղողներուն վկան եղած էի, այն ծարաւին որուն տակ ամբողջ մարդկութիւնը կը տոչորի եւ որու մասին ասկէ առաջ երբեք զիտակից եղած չէի:

Ու հոս ի՞նչ կերպ փրկութեան ճամբայ մը ընտրուած էր: Այնպիսի ճամբայ մը որ բնա՛ւ նպատակին չկրնար հասցնել: Բայց կը ճանչնայի ես Աստուծոյ շնորհքը բոլոր մարդոց համար, եւ այն փրկութիւնը, որու մասնակից կրնային ըլլալ բոլորն ալ Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքի միջոցաւ:

Ա՛խ, երանի թէ կարենայի բարձրաձայն ազադակել այս բոլոր բազմութեան մէջ թէ «Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ մեղաւորները փնտռելու եւ փրկելու»:

Ու արդէն Մակեդոնիայէն կոչն ընդունած էի «Եկուր եւ մեզի օգնէ»:

Եւ եթէ ասկէ առաջ միսիոնարական զործի մասին բոլորովին համոզուած էի, այսուամենայնիւ այս առաջին ապրումս միսիոնարական զաշտին վրայ, զիս այն գիտակցութեան մէջ հաստատեց թէ իմ բոլոր ժամանակս այս զործիչ վերաբերելու էր եւ թէ ես ա՛լ ինձի համար ապրելու չէի, հապա անոնց համար, որոնց մէջ Տէրը զիս դրած էր այս խաւար հեթանոս երկրին մէջ:

*
*
*

Ներքին խղճի խայթէն ազատելու եւ փրկութեան հասնելու համար ուրիշներ ի՞նչ սուղ գին կը վճարեն:

Հապա մե՞նք, մենք որ այնքան լսած ենք, այնքան լաւ գիտենք մտքով, ինչպէ՞ս պիտի ազատինք, եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկուիթեն մը, որ խօսելուն սկիզբը Տէրսմէն առաւ ու լսողներուն ձեռքով մեզի հաստատուեցաւ: Մենք ինչպէ՞ս պիտի ազատինք, սիրելի ընթերցող, եթէ այս փրկութիւնը մեզի համար մտքի անպտուղ զազափար մը մնայ եւ ոչ թէ սրտի ապրում մը:

Քանի որ զրտես սիրելի հոգի փրկութեան պէտքը, քանի որ քու ներքինդ ալ անհանգիստ է, քանի որ քու սիրտդ ալ կը պօկուի ապագայի պատասխանատուութեան առթիւ եւ զուն գիտես թէ Աստուծոյ հետ չունիս այն անհրաժեշտ հաշտ վիճակը, քանի որ զրտես թէ Անիկա քեզի դէմ բարկացած է, քանի որ զրտես նաեւ որ

Նա կը կանչէ զքեզ Իրեն հետ հաշտուելու քանի որ Անիկա չհրամայեր քեզի փրկութեան համար կրակին մէջէն քալել կամ զքեզ ամէն կերպ տառապանքներով տառապեցնել, ծովապահութեամբ, անձնազրկումներով, ուխտագնացութեամբ, մարմինը չարչարելով եւն. հապա միայն անկեղծ ու պարզ մանկան մը պէս հաւատաքով: Ուստի յանձնուէ քեզ սիրող Սիրոյն ամբողջ ազոտութեամբ. մեղքի ազատման եւ լուացումի համար, արդարութեան եւ սրբութեան համար: Ապա թէ ոչ, ինչպէ՞ս պիտի ազատիս վերջը, եթէ անհոգ ըլլաս, սարսափելի՛ բան պիտի ըլլայ Աստուծոյ ձեռքը ինչալը: Արթնցի՛ր, արթնցի՛ր, Տէրը կը կանչէ հանգիստ տալու, զքեզ Իրեն զաւակ ընելու: Այդ բարձր պատիւը որ քեզի կ'ըլլայ, ոտնակոխ մի՛ ընեք հարսանիքի հըրաւէրը մերժող բարեկամներուն նման, որոնց վերջը միայն սատակում եղաւ: Եկուր, Տէրը մեծ զոհողութիւն չակնկալեր քեզմէ, հապա նախ քու սիրտդ:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՆՈՅ. 4.—

Աճելու երկու ճամբայ կայ — լաւ կամ գէշ:

Պետրոս առաքեալ մեզի կ'ըսէ թէ ինչպէ՞ս կարելի է ուղիղ աճիլ:

ա) Պէտք է շնորհքի մէջ (փրկութիւն) սկսինք եւ զայն պահենք (խաղաղութիւն) (Բ. Պետ. Ա. 2):

բ) Պէտք է սերտենք (Բ. Պետ. Ա. 2, Բ. Տիմ. Բ. 15):

գ) Պատուական խոստմունքները օգտագործենք (Բ. Պետ. Ա. 4):

դ) Ուղիղ տեսակի քաջալերութիւն մշակենք (Բ. Պետ. Ա. 5):

ե) Մեր անձին վրայ ժուժկալութիւն ունենանք (Բ. Պետ. Ա. 6, Առ. ԺԶ. 32):

զ) Շատ բարեսիրտ, եղբայրասէր եւ սիրով լիցուն ըլլանք (Բ. Պետ. Ա. 7):

է) Միշտ յիշենք Յիսուսի մեզի համար կատարած զոքը (Բ. Պետ. Ա. 15):

ՆՈՅ. 11.—

Ձենք կրնար երկու տէրոջ ծառայել (Ղուկ. ԺԶ. 13). չենք կրնար միեւնոյն ատեն երկու ճամ-

բայ քարել. պէտք է կամ հողիով քարել եւ կամ մարմինով:

ա) Եթէ փրկուած ենք, պարտինք կատարել ինչ որ ճշմարիտ է, Հոով. Ը. 5:

բ) Իր աշխարհային փափաքները կատարել ուզող մարդուն վախճանը Հոով. Ը. 6 ա:

գ) Աստուածապաշտ սիրտ մը ունենալուն վարձատրութիւնը Հոով. Ը. 6 բ:

դ) Յիսուսի նման՞դ ենք, Հոով. Ը. 10, 11:

ե) Պարտապան ենք Աստուծոյ հաճելի կեանք մը ապրել (Հոով. Ը. 12, ԺԲ. 1:

զ) Ասիկա միակ ճամբան է փառքին (Հոով. Ը. 18):

ՆՈՅ 18.—

Միացած կը կենանք, բաժնուած կ'իյնանք. ասիկա նշանաւոր եւ ճշմարիտ խօսք մըն է: Մեր մարմինները աշխատէ շինուած են որ միասին պէտք է գործեն: Ժիշդ ինչպէս որ մեր մարմինն ամէն մասերը կը գործեն՝ աշխատէ ալ Աստուած կ'ուզէ որ գործէ իր եկեղեցին: Պօղոս առաքեալ Ս. Գիրքը կազմող 66 գիրքերէն մէկ հատը ամբողջ գրած է քրիստոնեաներուն ըսելու «մէկտեղ քարեցէք»:

ա) Անոնք որ միութեան մէջ չեն քարել՝ գէշ վախճան ունենալու վտանգին մէջ կը գտնուին (Փիլ. Գ. 17-19)

բ) Աստուած քաւարին ուժերուն զէմ կը մարտնչի, մենք ալ պարտինք Աստուծոյ կողմը բռնել Եփես. Գ. 10, 11: Բ. Կոր. Զ. 17:

գ) Մարմինը մէկ է Եփես. Գ. 4:

դ) Մենք որչափ աւելի միութիւն ունենանք աշխարհն աւելի եկեղեցին կը շինուի Եփես. Գ. 16:

ե) Ամէն մէկս նոյն բանը ընելու չենք ծնած Ա. Կոր. ԺԲ. 12-30:

զ) Եկեղեցիին մէջ «օգնութիւններ, կառավարութիւններ եւն» Աստուած գրաւ Ա. Կոր. ԺԲ. 28:

ՆՈՅ 25.—

Ինչպէ՞ս կատարել մեր գործը Աստուծոյ համար:

ա) Երբ կ'ըսես թէ «այս բանը պիտի ընեմ» եւ ուղիղ բան մ'է, ըրէ՛ գալիս Մատթ. ԻԱ. 28-32:

բ) Գոհ եղի՛ր գիտնալով որ Աստուած քեզի արդար հատուցում պիտի ընէ Մատթ. Ի. 1-16:

գ) Եթէ Յիսուսի կը ծառայենք, պէտք է Աստուծոյ համար կենանք Յովհ. ԺԲ. 26:

դ) Անձնասէր մի ըլլար Մարկ. Թ. 38-44:

ե) Շէնքդ ամուր շինէ Մատթ. Զ. 20, Է. 24-27:

զ) Ուրիշ մէկուն ձգած հիմին վրայ մի շինել:

Հոով. ԺԵ. 20:

է) Մի սպասեր քու վարձքդ հոս ստանալ, ոչ ալ իբր վարձկան գործէ Մատթ. Զ. 20:

ը) Ոչ ոքի գալթակողութիւն մի տար Ա. Կոր. Ժ. 32, 33: Բ. Կոր. Զ. 3:

թ) Առատութիւնով սերմանէ Բ. Կոր. Թ. 6. 7:

ժ) Մեծ եռանդով աշխատէ Բ. Կոր. ԺԱ. 16-33:

ժա) Յիշէ թէ մենք մեր գործերովը չէ որ փրկուած ենք Եփես. Բ. 9:

ժբ) ՉԱստուած սիրելը ամէն բոլորէնէն ու գոհերէ աւելի է Մարկ. ԺԲ. 33, Ա. Թադ. ԺԵ. 22:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՈՒԷՍԼԻ

Ճան Ուէսլիի մեծ հօրը հայրը կը կոչուէր Բարթոլէմիոս Ուէսլի, նախորդ դարու մաքրակրօններէն սերած: Համալսարանը աստուածաբանութիւն եւ բժշկութիւն ուսած էր, բայց աւելի եկեղեցականի մը կեանքը ապրեցաւ քան բժիշկի մը: Այն ժամանակուայ իրար յաջորդող եւ իրար հակասող վեհապետաց Սթուարթներու, Գրոմուէլի, Կարոլոս Բ. եւայլն, եկեղեցւոյ վրայ ունեցած փոփոխական քաղաքականութիւնը սուղի նստաւ ուղիղ հոգիներու վրայ: Այսպէս, երբ Սթուարթները Անգլիոյ գահը վերադրաւեցին, Բարթոլէմիոս Ուէսլի իր թեմէն վճռուեցաւ, եւ իբրեւ թափառական ապրեցաւ իր ապրուստը ճարելու համար բժշկութիւն ընելով ու միեւնոյն տեղն Աւետարանը քարոզելով երբ պատեհութիւն կը ներկայանար:

Ճան Ուէսլիի մեծ հայրը որ իրեն նման Ճան Ուէսլի կը կոչուէր, նոյնպէս համալսարանական մըն էր: Իր ամբողջ կեանքը աւետարանիչի մը կեանքը եղաւ: Իր հօրը նման նա եւս իր ժամանակի փոփոխութեանց զոհ գնաց: Իրեն խղճի աղատութիւնը վեհապետներու հրամաններովը կաշկանդել չուզելուն համար 1662 Օգոստոս 24ին անիկա 2000 ուրիշ պատուելիներու հետ՝ պաշտօնական եկեղեցիէն վճռուեցաւ: (Մեծ հայրիկ) Ճան Ուէսլի շատ անգամներ բանտարկուեցաւ եւ ստիպուած էր Աւետարանի իր պաշտօնէն թիւնը գաղտագողի ի գործ վնել: Անոր կրած զրկանքներն ու տանջանքները իր կեանքը կարճեցուցին եւ 1678ին 42 տարեկան հասակին մէջ մեռաւ իր ետեւէն թողելով շատ մը մատղաշ զաւակներ:

Ճան Ուէսլիի հայրը Սամ. Ուէսլի յաջողեցաւ կանուխ հասակէն Օքսֆորտի համալսարանը մտնել իբր աղքատ ուսանող Անկլիքան եկեղեցւոյ պաշտօնէութեան պատրաստուելու: Իր զբաղէտի տաղանդը եւ միեւնոյն ատեն հարուստ ուսանողի մը իբր ծառայ իր դիրքը, թուլատրեցին անոր ուսանողական ապրուստը: Յետագային նա իր զբաղ զիրքերէն մին Մէյքրի թագուհիին նըւիրեց, եւ անոր ի վարձատրութիւն էփօրթի 2000 հոգինոց թեմին հովիւ կարգուեցաւ: Սամուէլ Ուէսլի իր զաւակներուն տուաւ բոլոր առաքինութեանց օրինակը՝ բայց հազիւ կիսկատար հոգեւոր կեանք մը կրցաւ փոխանցել անոնց: Թէեւ անոնց կը յանձնարարէր ուղիղ ապրել, բայց չկրցաւ ցուցնել այն կեանքին աղբիւրը, Յիսուս Քրիստոսի վրայ սրտի հաւատքը: Միայն իր կեանքի վերջի տարիներուն այդ լոյսը իր մէջ ծագած կ'երեւէ: Մեռնելէ առաջ նա մարգարէական նախագագացում մը ունեցաւ այն հսկայ կրօնական յեղափոխութեան մասին զոր կը պատրաստուէր եւ որուն առաքեալները իր սեփական զաւակներէն պիտի ելլէին: Մեռնելէ առաջ նա իր տղուն Չարլզի ըսաւ, «Հաստատ եղէք, քրիստոնէական հաւատքը անպատճառ պիտի վերապրի այս երկրին մէջ. ես մեկնած պիտի ըլլամ, բայց զուր պիտի տեսնէք զայն»: Սամուէլ Ուէսլի այն հազուագիւտ անգլիացի քրիստոնեաներէն եղաւ որոնք Անգլիոյ համար միսիոնարական ձեռնարկներու պատիւը երազեցին: 1703ին նա ինքզինքը կառավարութեան թեկնածու առաջարկեց Հնդկաստան իբր միսիոնար երթալու, բայց ժամանակը դեռ հասած չէր, ուստի այս ձեռնարկը յաջողցնելու համար ոչ թէ կառավարութիւնը պէտք էր շարժէր, հապա իր քունէն ապագային արթնցած եկեղեցին:

Որքան որ ալ մեծ եղած ըլլար Ճան Ուէսլիի հոգիին ունկարագրին կերտման մէջ իր հօր ազդեցութիւնը, բայցեւայնպէս կարելի է ըսել թէ նա աւելի իր մօրը կը պարտի իր հոգւոյն բարոյական ու կրօնական շինութիւնը: Շատ արդարացիօրէն ըսուած է թէ Սուսաննա Ուէսլի ոչ թէ միայն Ճան Ուէսլիի մայրը եղաւ, հապա Մեթոտական եկեղեցիին մայրը: Նա դուստրն էր մաքրակրօն աստուածաբաններուն ամենէն նշանաւորներէն Տօք. Էննըսլիի որ մին էր նաեւ 1662ին եկեղեցիէն վտարուող 2000 պատուելիներէն: Սուսաննա Ուէսլի տէր էր շատ բարձր մտաւորականութեան, եւ ուսման ծառաւ ըլլալով ընդունած էր շատ կատարելագործուած կուլտուրա մը (գալլոցական կրթութիւն), օտար լեզուներ, փի-

լիսոփայութիւն, աստուածաբանութիւն: Իր հոգին կասկածներու տաժանելի ճգնաժամէ մը անցնելէ յետոյ, նա իր հաւատքը հաստատեց անխախտ եւ անսասան հիման՝ Տէր Յիսուս Քրիստոսի վրայ: Բարեկարգութեան կիներուն չափ զիտուն եւ հոգեւոր էր եւ իր զաւակաց հոգեւոր ուստաւորական կրթութեան մէջ ոչ մէկ տեսակէտ անտես չըրաւ:

Բայց ինչ որ հրաշալի էր Ճան Ուէսլիի մօրը քով, անոր մտքին եւ սրտին միջեւ եղած հաւասարակշռութիւնն էր: Անոր լուսաւորուած միտքը ծարաւի էր միշտ աւելի լուսաւորուելու, բայց, հակառակ, ինչպէս կը տեսնուի շատ մը այս տեսակի կանանց մօտ, անոր արտակարգ մտային զարգացումը իր սրտի գործը չէր կեցուցած: Որքան ալ որ նշանաւոր մտաւորական մըն էր Սուսաննա Ուէսլի, կարելի է ըսել թէ անոր կեանքը մանաւանդ իբր կին եւ մայր՝ գերազանց է: 19 զաւակաց մայր, նա մայրական բոլոր առաքինութիւնները իր մէջ միացուցած ունէր: Չաւակաց վրայ ունեցած իր մայրական սէրը եսապաշտական կամ կոպաշտական ոչ մէկ խառնուրդ ունէր: Նա իր զաւակաց մէջ կը տեսնէր ապագայի սերմերը զորոնք ինքը կոչուին ունէր մշակելու: Եւ երբ մահը եկաւ զայն իր սիրոյ դաշտէն հնձել՝ նա զիտցաւ Աստուծոյ կամքին առջեւ ծոխ՝ եւ իր ցաւին մէջ աւելի զօրաւոր դասնուեցաւ քան իր բարօրութեան օրերուն:

Ահա այսպիսի ծնողաց զաւակ աշխարհ եկաւ Ճան Ուէսլի՝ էփօրթի երիցատան մէջ, 1703 Յունիս 28ին: Հոն անցան իր մանկութեան առաջին տարիները, եւ իր ծնողաց, մանաւանդ իր մօր ազդեցութիւնը իր յետագայ կեանքը կազմեց, էփօրթի երիցատան մէջ ընտանեկան կեանքը շատ խստապահանջ էր: Դպրոցական կրթութիւնն իսկ մայրիկին ձեռքն էր: Սուսաննա Ուէսլի իր ընտանեաց անդամներէն առաջ՝ ինքզինքին պարտադրած էր ամենօրեայ ապրելակերպի տիպիւրին մը որմէ երբեք չէր շեղեր: Այս տիպիւրինը ամենէն առաջ քրիստոնէական էր: Այսպէս է որ խել մը մասողաշ զաւակներէ շրջապատուած այս մայրը ամէն օր առանց բացառութեան ամբողջ ժամ մը անհատական աղօթքի համար կ'առանձնանար: Իր զաւակաց կամքը անոր մասնաւոր աղօթքին, խնամքին եւ մասնաւոր հսկողութեան առարկան էր: Նա կ'ըսէ, «եթէ կ'ուզէք ձեր զաւակաց հոգին կերտել, ձեր առաջին ընելիքը անոնց կամքին յաղթելն է»: Չաւակները բոլորովին ազատ էին ուսման կրթութեանէ մինչեւ 5 տարիքը, բայց 5րդ տարիքարձին յաջորդող օրը

մանուկը կը դառնար աշակերտ եւ 6 ժամ կ'առանձնանար, որուն վախճանին պէտք էր իր այր ու բէնը գոց գիտնար: Երկրորդ դասին Ս. Գիրքը կը տրուէր անոր ձեռքը եւ նա կ'սկսէր հեգել Ծննդոց առաջին գլուխը: Երեք ամիս յետոյ մանուկը սահուն կը կարդար: Այս արդիւնքին համար մայրը ոչ մէկ ջանք չէր խնայեր: «Կըզմայլիմ քու համբերութեանդ» ըսաւ օր մը իր ամուսինը «այդ նոյն բանը առնուազն քսան անգամ կրկնեցիր սա մանկան»: «Ժամանակս պարապ վատնած պիտի ըլլայի» պատասխանեց մայրը «եթէ միայն 49 անգամներ կրկնէի, քանի որ միայն 20րդ անգամին յաջողեցայ»:

Ուէսլիի մօր սիրտը իր զաւակաց հոգեւոր կըրթութեան համար աւելի բոցավառ էր, քան անոնց մտաւոր կրթութեան: Նա անոնց սորվեցուց Ս. Գիրքը ճանչնալ կանուխ հասակէն: Անմիջապէս որ մանուկը կ'սկսէր թոթովել, մայրը անոր կը սորվեցնէր պարզ աղօթք մը: Նա շաբաթը մէկ կամ երկու ժամ կը նուիրէր իր զաւակաց իւրաքանչիւրին հետ գլուխ գլխի մտերիմ խօսակցութեան մը՝ զոր թոյլ կուտար զաւակաց իրենց սիրտը իրենց մօրը բանալ եւ անոր մօտ գաղտնապահ խորհրդատու մը եւ ցաւակից մը գտնել: Այս տեսակցութիւնը կը դիւրացնէր մօր համար իր զաւակաց հոգեկան վիճակին եւ զարգացման հակել: Այս մտերմիկ տեսակցութիւնները ճան Ուէսլիի վրայ ամենէն փրկարար ազդեցութիւնը ունեցան: 20 տարի յետոյ նա իր մօր այս մասին երախտագիտութեամբ կը զրէր, խնդրելով որ նորէն նա կարենար իրեն նուիրել հինգշաբթի երեկոները:

Ընտանեկան այս նախակրթարանին մէջ Ուէսլի ամբարեց մեծագոյն մասերը այն յատկութիւններուն գործնք նա յետագային գործածեց այն գործին մէջ ուր Աստուած կանչեց զայն: Հոն նա սորվեցաւ կանուխ հասակէն կեանքին եւ անոր պարտականութեանց վրայ բարձր զաղափար ունենալ: Հոն նա սորվեցաւ իր ժամանակը մէթոտով եւ կանոնաւոր գործածել եւ երբեք երկրորդական զբաղումներով զայն չկորսնցնել:

Ուէսլիի մանկութիւնը զերծ չեղաւ դժուարութիւններէ որոնք նախախնամական դեր կը կատարեն ամէն նկարագրի շինութեան մէջ: Մէկէ աւելի անգամներ նա ապրուստի խեղճութիւն տեսաւ ընտանիքին մէջ. յաճախ մահը այցելեց այս տունը զատակներէն մին կամ միւսը տանելու: Իր հայրը պարտքով մեղաւ հակառակ անոր կնոջ ծայր տոտիճան խնայողութեան: Երկու անգամ երիցատունը հրդեհի զոհ գնաց, երկրորդ

անգամին 1709 Փետ. 9ին, երբ կէս գիշերին ամբողջ ընտանիքը բոցերէն յանկարծակիի եկած յաջողեցան դուրս վազել՝ յանկարծ հայրը նշմարեց որ պզտիկ ծանր բացակայ էր: Կրկին եւ կրկին փորձեց բոցերուն մէջ նետուիլ զայն ազատելու, բայց անոնց կատաղութեան առջև ընկերկեցաւ: Այն ատեն ծունկի եկաւ և իր զաւակին հոգին Աստուծոյ յանձնեց: Այս միջոցին ան արթնցած էր եւ պատուհան եկած: Սանդուխ մը փնտռելու ժամանակ չկար. քանի մը հոգի իրարու ուսին վրայ ելլելով յաջողեցան ազատել մանուկը՝ ճիշդ այն վարկեանին երբ տանիքը բոցերէն տեղի տալով կը փլէր: Երբ ծան իր հօր բազկաց մէջ դրուեցաւ ողջ եւ առողջ՝ հայրը գոչեց, «Եկէք, դրացիներ, ծունկի վրայ դանք եւ Աստուծոյ փառք տանք. նա իմ ութը զաւակներս ազատեց, թող տուէք որ տունը այրի, ես բաւականաչափ հարուստ եմ հիմա»:

Ճան Ուէսլի իր ամբողջ կեանքի ընթացքին այս հրաշալի ազատման յիշատակը պահեց: Իր նկարներէն միոյն ներքեւ փորագրել տուած էր հրդեհուած տուն մը եւ սա խօսքերը, «Միթէ ասիկա կրակէ հանուած խանձող մը չէ» (Ձաք. Գ. 2):

Ազատ. Թարգ Վ. Ս.

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՐԳԵԻԸ

Օր մը արեւելքի մէջ ջուր ծախող մը իր սովորութեան համեմատ «ի աթի Ալլահ» (Աստուծոյ պարգեւը) պօռալով փողոցները կը շրջէր: Երբ տեսաւ որ մարդ մը մօտեցաւ իրեն ու սկսաւ իր հետ պօռալով քալել, բայց իր խօսքերուն վերայ հետեւեալ տարօրինակ հրաւերն ալ կ'աւելցընէր, «Ով բոլոր ծարուածներ ջուրերուն եկէք, եւ ստակ չունեցողներ՝ եկէք, ծախու առէք, ատանց ստակի ու առանց գնոյ ծախու առէք»:

Անոնք միասին կտրեցին քաղաքին փողոցները. բնակիչները իրենց տուններէն կը նայէին, անցորդները կանգ կ'առնէին մտիկ ընելու, բայց ոչ մէկը կուգար ջուր ուզելու: Պատճառն այն էր որ այն արեւակէզ երկիրներուն մէջ սովորութիւն չէր ջուրին նման թանկագին բան մը առանց դրամի տալ մարդու: Այսպէս մարդիկ ջրավաճառին լեցուն տիկին վրայ անտարբեր ակնարկ մը նետելէ վերջ կ'ըսէին, «Ո՛ր չինչով ոչինչ կը տրուի, այդ հրաւերը մարդիկ

քաշելու համար է միայն: Սակայն երկու բա-
րեկամները կը շարունակէին իրենց հրաւերը:

Արեւը սովորականին պէս իր կիզիչ ճառա-
գայթններով կարծես կրակ կը տեղար երկիրքէն,
կոկորդներ չորցած էին... Այսու ամենայնիւ այդ
տարօրինակ վաճառականներու ճամբուն վրայ
ոչ ոք ծարաւի կ'երեւէր, որովհետեւ տարակոյսն
ու անվստահութիւնը մարդոց ծարաւին կը յաղ-
թէին:

Բոլորին համար նոյնը չեղաւ սակայն: Փողո-
ցի մը անկիւնը անդամալոյծ մը կը տանջուէր:
«Ո՛հ կը հեծէր ան, որքա՛ն կը տառապիմ, ծա-
րաւ մե՛ռայ, ջո՛ւր, ջո՛ւր: ո՞վ ինձի ջուր պիտի
տայ»:

Երբ այսպէս կ'ողբար նա, իրեն այնպէս թը-
ւեցաւ թէ հեռուէն կը լսէր, «ի աթի Ալլահ»: Ա-
կանջ դրաւ եւ լսեց որ բարերար ջուրը կը մօ-
տենար եւ անոր հետ՝ կրկնուած սա աղաղակը,
«Ով բոլոր ծարուածներ ջուրերուն եկէք, և ստակ
չունեցողներ՝ եկէք ծախու առէք, առանց ստակի
եւ առանց գնոյ ծախու առէք»:

— Այդ ե՛ս եմ, աղաղակեց ան, ծարա՛ւ եմ,
դրամ չունիմ, ո՞վ Աստուծոյ պարգեւը, օրհնեալ
ըլլաւ:

Նոյն վայրկեանին ջրավաճառը կանգ առաւ:
Թարմ, գուլալ ջուրը հոսեցաւ իր բռնած թա-
սին մէջ: Բարերար ըմպելին առատօրէն հոսելով
իր չորցած շրթներն ու բերանը կը թրջէր:

— Նորէն, ըսաւ:

Ու դարձեալ մէկ անգամէն պարպեց գաւա-
թը:

— Նորէ՛ն, գոչեց:

Եւ ջուրը յորդեց, մինչեւ որ հիւանդը իր ծա-
րաւը կատարելապէս յազեցուցած գոչեց,

— Շնորհակա՛լ եմ:

Արդ, իւրաքանչիւր անգամ որ ամանը ջու-
րով կը լեցուէր, օտարականը ջուր ծախողին
ձեռքին մէջ դրամ մը կը սահեցնէր: Իր բազմա-
թիւ անգամ կրկնած խօսքին համաձայն թան-
կազին ըմպելին ծախու առնուեցաւ, գինը վճար-
ուած էր, բայց խմողը ձրի ստացաւ զայն:

Սիրելի փոքրիկ բարեկամներս, մեծ բարիք
մը չէ՞ր որ այդ օտարականը ըրաւ խեղճ ու թըշ-
ուառ, ծարաւէն տոչորոզ անդամալոյծին որ ջուր
գնելու եւ խմելու ունէ՛ միջոց չունէր:

Մենք բոլոր մարդիկս ալ ճիշդ այդ անդա-
մալոյծին նման խեղճ ու անկարող վիճակի մէջ
կը գտնուինք ու ծարաւի ենք, այսինքն փրկու-
թեան կարօտ ենք, մենք անոր պէտքը զգանք
կամ չզգանք, եւ առանց այդ փրկութեան կը

մեռնինք, յաւիտեան կը կորսուինք: Բայց մենք
այդ փրկութիւնը ստանալու, մեր միջոցներով
զայն ձեռք բերելու ոչ մէկ կարողութիւն չունինք:
Այդ փրկութիւնը ձեռք ձգելու համար եթէ աշ-
խարհի բոլոր հարստութիւնը տանք եւ կամ մեր
մարմինները չարչարենք, կամ թէ բարեգործու-
թիւններ ընենք ու անոնց ապաւինինք, դարձ-
եալ չենք յաջողիր. ատոնք բոլորը գէթօր հաւա-
սար են մեր փրկութեան արժէքին քով որ շատ
բարձր է:

Բայց, այդ միեւնոյն փրկութիւնը կրնանք ձրի
ստանալ, առանց ստակի, առանց գնոյ: Բացէք
եսայ. ԾԵ. գլուխը ու կարգացէք: Հայրն Աստ-
ուած մեզ կը հրաւիրէ որ երթանք առնենք զայն
որովհետեւ ինք մեզի համար անոր գինը վճա-
րած է եւ շատ սուղ վճարած է: Ան մեր փըր-
կութեան համար տուած է իրեն ամենէն սիրելի
եղող Բանը — Իր Միածին Որդին Յիսուս Քրիս-
տոսը: Մէկ բան միայն ունիք ընելիք, ձեռքեր-
նիդ երկնցուցէք ու առէք, այսինքն հաւատա-
ցէք որ Քրիստոս ձեր փրկութեան գինը վճա-
րած է իր արիւնով, խաչափայտին վրայ, եւ շա-
տո՛նց, ասկէ խիստ շատ տարիներ առաջ երբ
Ան խաչը ելաւ:

Յ. Գ.

.....

Ո՞վ ԱԻԵԼԻ ՇԱՏ ԿԸ ՍԻՐԷ

— Ես կը սիրեմ քեզ, մայրիկ, ըսաւ փոքրիկ
Յովհաննէս: Յետոյ թողուց իր դասերը եւ պար-
տէզ գնաց օրօրուելու, ձգելով իր մայրը որ կը-
րակին համար փայտերը վեր հանէ:

— Կը սիրեմ քեզ, մայրիկ, ըսաւ փոքրիկ նը-
ւարդ, ես քեզ շատ կը սիրեմ, այս տանը չափ:
Քիչ յետոյ նա այնքան անհանգիստ եւ անհնա-
զանդ եղաւ, որ իր մօրը ուրախութիւն պատճա-
ռեց երբ խաղալու գնաց:

— Կը սիրեմ քեզ, մայրիկ, ըսաւ Մարիամ,
ու իր փոքրիկ եղբօրը ձեռքէն բռնելով պարտէզ
տարաւ իր հսկողութեան տակ խաղցնելու հա-
մար, ինչ որ թոյլ տուաւ մօրը իր աշխատան-
քը աւելի շուտ եւ դիւրաւ լրացնելու: Յետոյ
Մարիամ աւելց սենեակը եւ կարասիներուն փո-
շին առաւ. այսպէս ուրախութեամբ զբաղեցաւ
ամբողջ Հինգշաբթի օրը: Իրիկունը պառկելու
ատեն երեք գաւակները կրկնեցին, «Կը սիրեմ
քեզ մայրիկ»: Առնցմէ ո՞վ աւելի շատ սիրեց:

Երբ մէկը շատ կը սիրենք, պէտք է ջանանք
այն սէրը ցոյց տալ խօսքէն աւելի տարբեր կեր-
պով, Յիսուս Քրիստոսի օրինակին պէս որ իր

կեանքը մեզի համար տուաւ: Ան չուզեց առանձինն վայելել իր գեղեցիկ երկինքը, հապա եկաւ այս աշխարհը, մեր մեղքերը իր վրայ առնելու եւ անոնց պատիժը մեր տեղը ինք կրելու, տառապելով ու չարչարուելով խաչին վրայ:

Այս պատճառաւ մենք կը պարտինք զԱյն սիրել մեր բոլոր սրտովը եւ ջանալ Անոր հաճելի ըլլալ մեր ամբողջ կեանքի ընթացքին մէջ:

Թարգ. Մ. Կ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԷՆ ԼՈՒՐ ԵՐՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՆԱԻԱԿԱՏԻՔԻ ՕՐԸ.— ՍԷՆ Լուի մէջ հաւատքով ձեռնարկուած աղօթարանին կառուցումը՝ Տէրութեան օգնութեամբը աւարտեցաւ: Այս խիստ քաջալերական եւ ոգեւորիչ յաջողութեան պատճառաւ՝ ֆրանսահայ Աւետ. Եկեղեցիներու գաւազնները՝ միանուազ խնդակցութեամբ եւ երախտագիտական զգացումներով Տէրը կը փառաւորեն: Յիրաւի օրհնութիւնն ու փառքը կը վայելէ Անոր՝ որ այս հոգեւոր անապատին մէջ «նոր կանթեղ» մը կանգնելու ներշնչման հետ, զայն իրագործելու բոլոր կարելիութիւններն ու քաջութիւնը տուաւ Իրեն հնազանդող ծառաներուն:

Այս նորակառոյց եկեղեցին շինուեցաւ Աստուծոյ հրամանովը եւ իր գաւազններուն նուէրներովը: Աշխատանքի լծուած էին քիչ թուով վարձուած մասնագէտ աշխատաւորներու հետ՝ յօժարակամօրէն ինքզինքնին տրամադրող քարեկամներ, նաեւ անգործ հոգեւոր եղբայրներ եւ անձնուէր քույրեր: Մեր անկեղծ շնորհակալութիւններուն հետ կ'ուզենք անոնց յիշեցնել թէ «Աստուած անիրաւ չէ որ ձեր վարձքը մոռնայ . . .»: Երբ. Զ. 10:

Տաճարը երկցատունով մէկտեղ հսկայական գործ մը չէ, բայց հրապուրիչ ըլլալու աստիճան գեղեցիկ է իր նրբակերտ եւ ներդաշնակ անկիւնաւորումներովը: Ամենամեծ առաւելութիւններէն մին ալ իր բարձր եւ տիրական դիրքն է, որով կ'ընդգրկէ ամբողջ շրջակայքի լայնածաւալ եւ նկարչագեղ դաշտավայրերն ու լեռնանկարները: Կարճ՝ հայ ճարտարապետի մը ամենագոյտորիկ մէկ երազին մարմնացումն է ան, պզտիկ գլուխ գործոց մը . . .

Սրբարանին ամբողջ արտաքին ճակատը ծածկուած է ճերմակ եղերուած մեծադիր խաչով մը: Կենդանի եւ ցայտուն պատգամ մըն է կարծես ան, որ, ամէն ուշադիր այցելուի կը կանխա-

յայտնէ թէ այդ սուրբ յարկին տակ կը քարոզուի միայն «Խաչեալ Քրիստոսը», որ թէեւ հրաշք փնտոողներուն գայթակղութիւն եւ յիմարութիւն է, բայց մեզի հաւատացեալներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնն է Ա. Կոր. Ա. 18-31:

Եւ յիշաւ, այս «չար ժամանակներուն», այս ամենաառնապատ պարագաներուն եւ այս աղտոտ միջավայրին մէջ, հզօր բողոքի եւ անդիմադրելի հակասութեան մը պէս կանգնող այս աղօթարանին ի տես՝ մարդ ինքնաբերականօրէն կը մղուի Սաղմոսերգութիւն հետ աղաղակել, «Տէրը մեզի մեծ բաներ ըրաւ ու մենք ուրախացանք»: «Ինչ մեծ ու զարմանալի են Քու գործերդ ով Աստուած Ամենակալ . . . Ով Տէր, Քու բոլոր գործերդ Քեզ պիտի գովեն, եւ Քու սուրբերդ Քեզ պիտի օրհնեն»:

Ու վերջապէս, թէեւ այս «սուրբ գործը» իր առջեւէն «վերջին օրերու» յատուկ հաւաքութեան եւ ապականութեան հաւատքով, ետեւէն՝ տնտեսական ամենածանր տաղանայով պաշարուած, բայց Աստուած «այս ամէն բաները բարի գործակից ըրաւ զինք սիրող ծառաներուն եւ զանոնք այս ամէն բաներուն մէջ ա'լ աւելի յաղթող ըրաւ Անով որ մեզ սիրեց»: Իրեն փառք հիմա եւ յաւիտեան:

Նաւակատիքը տեղի ունեցաւ Հոկտ. 28 կիրակի կէսօրէ վերջ ժամը 3 - 6: Բեմէն մինչեւ դուռը, բակին դուռը ծածկուած էր խուռն եւ խիտ բազմութեամբ մը: ՍԷՆ Լուի քարոզիչը Վահան եղբ. Սահակեան օժման ժողովը բացաւ սրտաբուրդ շնորհակալութեան աղօթքով եւ Ս. Գիրքի ընթերցումով: Մարտէյի կիրակնօրեայ դպրոցի մանուկները խանդավառութեամբ երգեցին «Որքա՛ն քաղցր է ծառայիլ Քեզ»: Քանի մը պզտիկներ արտասանութիւններ ըրին եւ ապա Լիօնի հովիւը Պատ. Ժ. Պարսումեան հրաւիրուեցաւ խօսելու: Ներկայ եղող թրքախօսներն ալ այդ պահուն օրհնութեանց մասնակից ընելու համար պատգամը թուրքերէն լեզուով արուեցաւ: Նիւթն էր «Աքենեղեր» Տէրը մինչեւ այստեղ մեզի օգնեց Ա. Թադ. Է. 12: Պատգամախօսը խորունկ եւ ազդու ներշնչումով մեր առջեւ դրաւ Աստուծոյ հայրական նախախնամութիւնը եւ օգնութիւնը, հոն մեր արիւնքաւ ջարդերու ընթացքին, հոն այս օտարօտի հորիզոններուն տակ եւ ներկայ մութ ու տապալակից օրերուն մէջ: Նետո՛յ ինչպէս Տէրը անհաւատալի կերպով ոչ միայն մեզի միացորդ մը պահեց, այլ զանոնք հոս ու հոն, հայրօրէն համախմբեց ու հաստատեց ալ: Այն-

պէս որ մենք ներկայիս ոչ միայն անհատական, այլ ազգային եւ կրօնական տեսակէտներով ալ բարելաւ եւ մխիթարական վիճակի մէջ կը գտնուինք կազմակերպուած եւ աճեցուն եկեղեցիներով: Շեշտուեցաւ թէ ինչպէս անցեալին նոյնպէս եւ ներկային ու ապագային համար ալ միշտ պէտքը ունինք Աստուծոյ անհրաժեշտ օգնութեանը Զաք. 2. 4, Յովհ. ԺԵ: 5: Պատ. Ժ. Պարսումեան իր պատգամը վերջացուց սա հոգեպնդիչ եզրակացութեամբ թէ, քանի որ Աստուծոյ հայրութեան եւ օգնութեան պէտքը ունինք վաղուան ու մեր ամբողջ ապագային համար, եւ քանի որ «Տէրը մինչեւ այստեղ մեզի օգնած է» խիստ մեծ հաւատարմութեամբ, այսքանը արդէն Սուրբ Գիրքին անյեղլի խոստումներուն հետ մէկտեղ բաւական եւ անկասկածելի դրաւական մըն է թէ, Տէրը ասկէ վերջն ալ աստուածային հաւատարմութեամբ պիտի օգնէ մեզի, եթէ մենք բոլոր սրտով իր ողորմութեանը յուսանք եւ իրեն կոթնինք զաւակներու պէս:

Երգէ մը վերջ խօսեցաւ մեզի Վեր. Յ. Ն. Ղազարոսեան: Իր բնաբանն էր Զաք. Ժ. 9: Խորունկ յուզումով մը թաթառուն այս պատգամը կրնանք վերստ-

եղ սա խորագիրով «Տէրը յիշել հեռաւոր երկիրներու եւ այլազան ազգերու մէջ»: Որպէս նախաբան՝ օտարագաղթ մեր ժողովուրդին ողբալի վիճակը մեր առջեւ դնելէ վերջ, պատգամախօսը ազգուօրէն շեշտեց Ա. «Պարտականութիւնը» որ նահատակութենէ վերապրող մեր ժողովուրդին վրայ կը ծանրանայ: Այս առաջին մեծ գիծը կրնանք ամփոփել սապէս, մեր վեհ եւ սուրբ նախահայրերը, մեր իրենց արիւնով իրենց աստուածապաշտութիւնը կնքող մարտիրոսները եւ իրենց ճշմարիտ հաւատքն ու պաշտամունքը մեզի փոխանցող նահատակ հայրերու բանականները (Եբր. ԺԲ. 1) մեր վրայ սուրբ եւ ստիպողական «պարտականութիւն» մը կը դնեն: Այդ նուիրական պարտականութիւնն է «Տէրը յիշել» ամենուրէք, եւ իրենց մեզի աւանդած հաւատքին աստուածային հուրը երկիւղածութեամբ պահել եւ արծարծել: Բ. «Արտօնութիւն» է Տէրը ճանչըցնել աշխոյ: Եթէ զԱյն յիշելը մեր պարտականութիւնն է, զԱյն ճանչցնելն ալ մեր ամենասրբազան արտօնութիւնն է, քանզի Տէրը զմեզ ընդունեց եւ դրաւ այս զործին վրայ: Այսօր ամ-



Սէն Լուի նորակառոյց Հայ Աւետ. Եկեղեցւոյ շէնքը

բողջ աշխարհ, մանաւանդ մեր խեղճ ազգը պէտք ունի կենդանի Գրիստոսին եւ Անոր մեծ փրկութեան, պէտքը Անոր ուժին եւ լոյսին, Անոր սիրոյն եւ մխիթարութեանը: Ուստի մենք Տէրոջմէն արտօնուած ենք շատ հոգիներ կրակէն ազատելու Տէրոջը մօտալուտ զալուստէն առաջ: Գ. «Կրնանք» մեր պարտականութիւնը կատարել եւ թանկագին արտօնութիւնը օգտագործել, 1) որովհետեւ դեռ շնորհաց շրջանին մէջ կ'ապրինք, 2) Տէրը ամենուս մեր կարողութեան համեմատ մնասններ եւ տաղանդներ տուած է, 3) Մենք թէև ոչինչ ենք, բայց Ս. Հոգին է մեր զօրութիւնը: Դ. «Կ'ուզենք» մեր պարտականութիւնը կատարել, այսինքն Տէր Յիսուսը թաղաւորեցնել ամէն տեղ: Կ'ուզենք, որովհետեւ Տէրոջը կամքը, փափաքը եւ հրամանը այս է, որովհետեւ մեր կոչումը, պարտականութիւնը եւ արտօնութիւնը այս է, որովհետեւ ամբողջ մարդկութիւնը պէտք ունի Անոր, որովհետեւ մեր սիրտը կ'այրի հոգիներու կորուստը տեսնելով, որովհետեւ անոնց ալ փրկութեան յոյս մը կայ դեռ: Պաշտօնեան իր հոգեշունչ պատգամը վերջացուց այսպէս, ի պա-

տասխան Չաք. Ժ. 9ին, «Կ'ուզենք ով Տէր, ամհ-
նուրէք Քեզ յիշել, պաշտել ու թաղաւորեցնել
մինչեւ որ Դուն գաս»:

Պատգամէն յետոյ շէնքին նուիրման յայտա-
րարութիւնը գրաւորապէս կարդաց, որ ահաւա-
սիկ.—

«Ուստի զօրացած այն հաւատքով, եւ լեցուն
այն յուսով թէ Բարձրեալն Աստուած պիտի բա-
րեհասի իր սրբութիւնով բնակիլ կոտրած ու խո-
նարի սրտերու մէջ, զանոնք մխիթարելու, զօ-
րացնելու եւ քաջալերելու հոգեւորապէս եւ իր
հասութիւնը յայտնելու անոնց վրայ:

Այն երկնային յուսով ահա կը հաշակենք այս
վայրը իբր Մարտէյլի Հայ Աւետ. եկեղեցւոյ Սէն
Լուի աղօթարան—Ժողովարանը, եւ կը նուիրենք
զայն Ամենասուրբ Երրորդութեան իբր իր բնա-
կարանն ու սրբարանը, որուն մէջ Անոր փառ-
քը աւելնայ ու Անոր Թագաւորութիւնը տարած-
ուի մեր մէջ ու մեր միջոցաւ առ ի օրհնութիւն
բոլոր մարդոց՝ մեր երգերով ու մեր փառաբա-
նութեամբ, աղօթքով, Աստուծոյ խօսքին ընծե-
րումովն ու քարոզութեամբը, սուրբ խորհուրդ-
ներու կատարումովը եւ եկեղեցւոյ կանոնագ-
րութեանց համաձայնող ժողովներու տեղի ու-
նենալովը:

Ասիկա աղօթքի տունն է նաեւ բոլոր ազգե-
րուն համար:

Եւ որպէսզի այս նուիրումը Տէրոջը ընդու-
նելի ըլլայ, եկէք մենք եւս այս վայրկեանիս ա-
մէն ինչով որ ենք եւ ունինք, անվերապաօրէն
Անոր յանձնուինք, որպէսզի Տէրը իր յաւիտեա-
կան ուխտին անդառնալի զօրութիւնովը միա-
նայ մօզի եւ զմեզ առնէ իր ձեռքին մէջ իբր իր
սեփականութիւնը եւ զմեզ գործածէ իր ծառա-
յութեանը գործին մէջ, մեր Տէր Յիսուս Քրիստոս
սի ձեռքով»:

Այս հանդիսաւոր յայտարարութենէն յետոյ
վերապատուելի պաշտօնեան նուիրման աղօթքը
մատուց որուն կը մասնակցէր համայնքը յոտն-
կայս:

Կալվին եղբ. Պարսումեանի մեներգէն յետոյ
A. C. O. ի կողմէ միսիոնարութեան հիմնադիր
անօրէն վեր. Փ. Պէրրօն հրաւիրուեցաւ խօսելու:
Որպէս բնաբան ընտրած էր Սաղ. ՃԺԸ. 15, 17 և
19 համարները: Ծնունդով այլազգի բայց հոգիով
հայ այս հոգեւոր մշակը, խողխողուած բարեկամի
մը մօտեցողի փափկութեամբ մեր անցեալ և ներ-
կայ ախար էջերը շրջեց երկու խօսքով: Ապա
իր պատգամը մեծ յարմարութեամբ մեր առջեր
զրաւ սա երեք մեծ գիծերով, Ա. փրկութեան եւ

ցնծութեան ձայնը որ պէտք է լեցնէ Քրիստոսով
արդարացածներուն բնակարանները: Բ. Տէրոջը
մեծամեծ զործերը պատմող փրկեալները՝ պէտք
է լեցնեն Աստուծոյ տունը: Գ. Այս նորակառոյց
սրբարանը «լեռան վրայ կեցող» լուսազարդ քա-
ղաքի մը պէս պէտք է լեցնէ իր ամբողջ շրջա-
կայքը Քրիստոսի Աւետարանին փրկարար լուսո-
վր: Վերջացնելէ առաջ այս խորապէս տպաւո-
րիչ պատգամը, Տր. Պէրրօն մեր Ֆրանսահայ Ա-
ւետ. եկեղեցիներու զործունէութեան հակիրճ
նկարագրութիւնը ըրաւ սա պատկերով, «Իր ըս-
կըղբաւորութեան մէջ խիստ աննշան «մանա-
նելիի հատիկ մըն» էր որ ծլելէ վերջ յոյժ քա-
ջալերական յառաջխաղացումներ ըրաւ եւ ներ-
կայիս փոթորիկներու տոկացող հաստաբուն եւ
պողալից ծառ մըն է որ միշտ նոր յայտեր ունի»:
Ֆրանսահայ եկեղեցիներու կողմէ որպէս ներկա-
յացուցիչ խօսելու հրաւիրուեցաւ Փօնտ Օպէնա-
սի հովիւր Առաքել եղբ. Փափագեան, որ եկեղե-
ցւոյ շինութեան պարագաները հոգեւորապէս
պատկերացնելով, ազգու կոչ լ'ը ըրաւ՝ ներկա-
ները լուրջ անձնաքննութեան հրաւիրելով, թէ
արդեօք իրենց սիրտն ալ Քրիստոսի արիւնով
գնում է, ինչպէս այս նիւթական եկեղեցիին
հոգը, եւ աստուածաշնչական բոլոր հարկաւոր
ատաղձները հսն հաւաքում է: Ըջմարտապէս
Սուրբ Հոգւոյն ձեռքով մեր մէջ՝ յաւիտեան օրհն-
եալ Երրորդութեան յարմար բնակարան և սուրբ
տաճար մը շինում է: Մարտէյլի եկեղեցւոյ ան-
դամներէն ծերունի Գէորգ եղբօր ինքնատիպ ու
խիստ թելադրիչ գրաւոր ուղերձէն յետոյ Վա-
հան եղբ. Սահակեան՝ Աստուծոյ, զործին օգնող
բարեկամներուն եւ բոլոր ներկաներուն շնորհա-
կալութիւն յայտնեց, որմէ յետոյ Առաքել եղբայր
Փափագեանի աղօթքովը եւ վեր. Փ. Պէրրօնի
օրհնութեամբը օծման հանդիսաւոր արարողու-
թիւնը վաւուրեցաւ: Ժողովուրդը մեկնեցաւ օրհ-
նքած եւ հոգեպնդուած:

Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ

Rédaction du « PANIÈRE »

7, Rue Panière - MARSEILLE (France)

Le Gerant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Sournin Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷջ

(Շաբաթաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

Ս ԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.)Յ. Ն. Լազարսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 11 Rue de l'Eclipse

Շաբաթամիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի, Սէն Ժիւլիէնի, Սէն Լանթուանի, Սէն Մարկի-Թի, Սէն Ժէրոմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

Սէն Թ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻԹԹԱ.—Քարոզիչ' Պրն. Ս. Պագգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,
Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

Սէն ՓԻԷԹ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ.—Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս
եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ.—Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,
18, Rue du Dr. Rebatel:

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պրն. Ի. Աբրահամեան
2. Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.
17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՉ.—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^o
Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournesfort Paris 5^o
Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասարդ-

դուհեաց Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Դ. կիրակիները Սբ. Գրոց

մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով
59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulineaux.

ԱԼՖՈՐՎԻԼ.—Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դոս

ԲԱՅՈՒԱԾ Է

1935 ՏԱՐՈՒԱՆ «ԲԱՆԲԵՐ» ԱՄՍԱԹԵՐԹԻՆ

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ֆրանսայի համար

Հայերէն լեզուով	20 ֆր.
Թուրքերէն լեզուով	10 ֆր.
Երկուքը միասին	25 ֆր.

Սուրիա

Հայերէն լեզուով	15 ֆր.
Թուրքերէն լեզուով	7 ֆր.
Երկուքը միասին	20 ֆր.

Ասերիկա

Հայերէն լեզուով	1 տոլ. 25 ս.
Թուրքերէն լեզուով	60 ս.
Երկուքը միասին	1 տոլ. 75 ս.

Պալքանեան եւ ուրիշ երկիրներ

Հայերէն լեզուով	20 ֆր.
Թուրքերէն լեզուով	10 ֆր.
Երկուքը միասին	25 ֆր.

ԲԱՆԲԵՐԻ ՕՐԱՑՈՅՑԸ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԱՑՈՅՑԸ 1935Ի ՀԱՄԱՐ ԱՐ-
ԴԷՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Է: ՓԱՓԱՔՈՂՆԵՐ ԹՈՂ ԱՊՍ-
ՊՐԵՆ ԸՆԴՓՈՅԹ: ԳԻՆԸ ՍՈՎՈՐԱԿԱՆԻՆ ՆՄԱՆ
ՖՐԱՆՍԱ ԵՒ ՍՈՒՐԻԱ 6. 50 ՖՐ. ՓՕՍԹՈՎ ՄԻԱՍԻՆ:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՖՐ. ԿԱՄ 50 ՍԷՆԹ:

ՇԱՏԵՐՈՒ ՓԱՓԱՔԻՆ ՅԱԳՈՒՐԴ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԱՅՍ ԱՆԳԱՄ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱ-
ՐԵՒՈՐԱԳՈՅՆ ՏՕՆԵՐՆ ԱԼ ՄԱՄՆԱԻՈՐ ԷՋԻ ՄԸ
ՎՐԱՅ ԶԵՏԵՂԱԾ ԵՆՔ, ԱՅՆՊԷՍ ՈՐ ՕՐԱՑՈՅՑԸ
ՄԱՏՁԵԼԻ Է ԱՄԵՆՈՒՆ:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԿԱՄ ԾՆՆԴԵԱՆ ԱՌԹԻԻ ԳԵՂԵ-
ՑԻԿ ՆՈՒԷՐ ԿՐՆԱՅ ԸԼԼԱԼ: ԱՍՈՎ ԲԱՐԵԿԱՄԴ. ԱԶ.
ԳԱԿԱՆԴ ԱՄԲՈՂՋ ՄԷԿ ՏԱՐԻ ԿՐՆԱՍ ՈՒՐԱԽԱՅՆԵԼ:
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Rédaction du "PANPÈRE"
7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & Cie
39, Rue St.-Savournin - MARSEILLE